# ՀԱՂՈՐԴՈՒՄ

## 2017թ. ընթացքում հանցագործությունների քննության վերաբերյալ

2017թ. ընթացքում հանրապետությունում արձանագրվել է հանցագործության 20.285 դեպք (2016թ.՝ 18.764), որոնցից 10.220-ը՝ Երևան քաղաքում:

Հանցավորության շարժընթացի վերլուծությունը վկայում է, որ թեև ընդհանուր հանցավորության քանակական ցուցանիշն աճել է, սակայն առանձին հանցատեսակներով, հատկապես ծանր և առանձնապես ծանր հանցագործություններով, արձանագրվել է հանցավորության մակարդակի էական նվազում:

Այսպես.

Նախորդ տարվա համեմատությամբ հանցագործության դեպքերն աճել են 1521-ով կամ 8.1%-ով: Դրան զուգահեռ՝ առանձնապես ծանր հանցագործության դեպքերը նվազել են 33-ով կամ 16.7%-ով (198-165), իսկ ծանր հանցագործության դեպքերը՝ 352-ով կամ 11.4%-ով (3081-2729): Միաժամանակ, միջին ծանրության հանցագործության դեպքերն աճել են 284-ով (4728-5012) կամ 6%-ով, իսկ ոչ մեծ ծանրության հանցագործության դեպքերը՝ 1622-ով (10.757-12.379) կամ 15%-ով:

Փաստորեն, ծանր և առանձնապես ծանր հանցագործությունները նվազել են 385-ով կամ 13.3%-ով, իսկ ոչ մեծ և միջին ծանրության հանցագործության դեպքերն աճել են 1906-ով կամ 12.3 %-ով:

Պետք է արձանագրել, որ նշված ոչ մեծ ծանրության հանցագործությունների ճնշող մեծամասնությունը մասնավոր մեղադրանքի դեպքեր են:

2017թ. ընթացքում հանրապետությունում նախապատրաստվել է 40.611 նյութ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 39.078-ի դիմաց: Փաստորեն՝ նախապատրաստված նյութերի թիվը նախորդ տարվա համեմատությամբ աճել է 1533-ով, ինչը կարելի է պայմանավորել և՛ 2017թ. հանրապետությունում արձանագրված հանցագործության դեպքերի թվի աճով, և՛ դեպքերի ստուգումը հանցագործությունների ու պատահարների մասին ստուգման կարիք ունեցող տեղեկությունների, ահազանգերի գրանցման թիվ 2 մատյանում անհարկի չգրանցելով, ինչպես նաև հանցագործության դեպքերն առհասարակ գրանցելու հարցում դատախազության կողմից դրսևորած հետևողականությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում նախապատրաստված 40.611 ավարտված նյութից 27.758-ով կամ 68.4%-ով կայացվել է որոշում՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին, որոնցից 20.785-ը՝ արդարացման, 6973-ը՝ ոչ արդարացման հիմքով:

Համեմատության համար նշենք, որ 2016թ. նախապատրաստված 39.078 ավարտված նյութից 25.962-ով կամ 66.4%-ով է կայացվել քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշում, որոնցից 19.749-ը՝ արդարացման, 6213-ը՝ ոչ արդարացման հիմքով:

2017թ. ընթացքում նախապատրաստված 40.611 նյութից 11.679-ով կամ 28.8%-ով հարուցվել է քրեական գործ, որոնցից 286-ը կամ 2.4%-ը՝ նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման վերացման արդյունքում: Նշված 286 քրեական գործից 31-ը հարուցվել է ՀՀ գլխավոր դատախազի, 27-ը՝ անմիջական վերադաս դատախազի, 228-ը՝ հսկող դատախազների կողմից:

Համեմատության համար նշենք, որ 2016 թվականին նախապատրաստված 39.078 նյութերից քրեական գործ է հարուցվել 11.984-ով կամ 30.7%-ով, որոնցից 353-ը կամ 2.9%-ը՝ նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման վերացման արդյունքում, այդ թվում 17-ը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից:

Քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը վերացվելու արդյունքում 2017թ. հարուցված հիշյալ 286 քրեական գործից 10-ը կամ 3.5%-ը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 3-ը կամ 1.4%-ն ուղարկվել է դատարան՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու հարցը քննելու, 5-ը կամ 1.7%-ը միացվել է այլ գործերի, 214-ով կամ 74.8%-ով վարույթը կարճվել է, 12-ով կամ 4.2%-ով՝ կասեցվել, 42-ով կամ 14.7%-ով նախաքննությունը շարունակվել է 2018թ. հունվարի 1-ի դրությամբ:

Նշենք նաև, որ 2016 թվականին վերացվել է քրեական գործ հարուցելու մասին 14, իսկ 2017 թվականին՝ 13 որոշում:

2016թ. համեմատ, 2017թ. նախապատրաստված նյութերով քրեական գործ հարուցելու մասին որոշումների քանակը նվազել է 305-ով (11.984-11.679) կամ 2.6%-ով: 67-ով կամ 19%-ով նվազել են նաև քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումները վերացնելու դեպքերը (353-286), դրան հակառակ՝ 1796-ով կամ 6.9%-ով (25.962-27.758) աճել է քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումների թիվը, ինչը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, այդ թվում՝ ոչ մեծ ծանրության մասնավոր մեղադրանքի դեպքերի հաշվառման աշխատանքների բարելավմամբ:

Նշենք, որ 2017 թ. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարված օրենսդրական լրացմամբ նյութերի նախապատրաստման 10-օրյա ժամկետը մինչև 20 օր երկարացնելու հնարավորություն ընձեռնվեց:

Կարծում ենք՝ վերոհիշյալ օրենսդրական լրացումը հիմնականում հանդիսացավ պատճառ՝ մի կողմից քրեական գործ հարուցելը անհիմն չմերժելու, մյուս կողմից՝ անհիմն կերպով քրեական գործ չհարուցելու համար:

2017թ. ընթացքում հանրապետության նախաքննության մարմինների կողմից քննվել է 17.708 քրեական գործ (2016թ.՝ 18.479): Նախորդ տարվա համեմատությամբ քննված քրեական գործերի թիվը նվազել է 771-ով կամ 4.2%-ով: Չնայած այն հանգամանքին, որ հանրապետությունում աճել են հանցագործության դեպքերը, սակայն 2016թ. համեմատությամբ 2017թ. մերժված նյութերի թիվն աճել է (պատճառները վերևում արդեն նշվել են), ինչով էլ պայմանավորված՝ քննված քրեական գործերի թիվը նվազել է:

2017թ. քննված 17.708 քրեական գործից 2464-ը փոխանցվել է նախորդ տարվանից (2016թ.՝ 3155), որը 691-ով կամ 21.9%-ով պակաս է, քան 2016 թվականին, իսկ 15.244-ը վարույթ է ընդունվել 2017թ. ընթացքում (2016թ.՝ 15.324), որը 80-ով կամ 0.5%-ով պակաս է, քան 2016 թվականին:

2017թ. վարույթ ընդունված 15.244 քրեական գործից 11.152-ը հարուցվել է հաշվետու ժամանակաշրջանում (2016թ.՝ 11.778). այդ թվում՝ 3930-ը հարուցվել է նախաքննության մարմինների (2016թ.՝ 9445), 6799-ը՝ հետաքննության մարմինների (2016թ.՝ 1904), իսկ 423-ը՝ դատախազների կողմից (2016թ.՝ 429):

2017 թ. ավարտվել է 7103 քրեական գործի վարույթ (2016թ.՝ 7468), այդ թվում՝ 2686-ը՝ 3447 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան (2016թ.՝ 2761 քրեական գործ 3534 անձի վերաբերյալ)[1], 61-ը՝ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու միջնորդությամբ ուղարկվել է դատարան (2016թ.՝ 49), 4356-ը կարճվել է (2016թ.՝ 4658), որոնցից 2430-ը՝ արդարացնող (2016թ.՝ 2843), 1926-ը՝ ոչ արդարացնող հիմքով (2016թ.՝ 1815) :

Հաշվետու ժամանակաշրջանում 5635 քրեական գործով վարույթները կասեցվել են (2016թ.՝ 6237), որոնցից 4815-ը՝ քրեական գործով որպես մեղադրյալ ներգրավվելու ենթակա անձի անհայտ լինելու (2016թ.՝ 5565), 779-ը՝ անձի հետախուզման մեջ գտնվելու (2016թ.՝ 616), իսկ 41-ը՝ այլ հիմքերով (2016թ.՝ 56):

2017 թ. 898 քրեական գործ ուղարկվել է ՀՀ-ում քրեական հետապնդում իրականացնող այլ մարմիններ (2016թ.՝ 1045), 1679 քրեական գործ միացվել է (2016թ.՝ 1219), քրեական գործ հարուցելու մասին 5 որոշում վերացվել է դատախազի կողմից (2016թ.՝ 2):

2017թ. վերջին անավարտ է մնացել 2388 քրեական գործ (2016թ.՝ 2508), ինչը 120-ով կամ 4.8%-ով պակաս է, քան 2016 թվականին:

2017 թ. ընթացքում ձերբակալվել է 892 անձ, նախորդ տարվա 994-ի դիմաց, այսինքն՝ ձերբակալված անձանց թիվը նվազել է 102-ով կամ 10.3%-ով: Ձերբակալումից ազատվել է 187 անձ՝ 2016թ. 251-ի դիմաց, այսինքն՝ ձերբակալումից ազատված անձանց թիվը նվազել է 64-ով կամ 25.5%-ով:

2017թ. ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ է ներկայացվել մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին 986 միջնորդություն, որոնցից բավարարվել է 912-ը կամ 92.5%-ը, մերժվել՝ 74-ը կամ 7.5%-ը: Ներկայացված միջնորդություններից 118-ի կամ 12.9%-ի դեպքում ընտրվել է կալանավորմանն այլընտրանքային խափանման միջոց՝ գրավ:

[1] Մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված գործերի և անձանց վերաբերյալ վիճակագրական տվյալները վերաբերում են առանց կրկնակիի դատարան ուղարկված վիճակագրական տվյալներին, որոնք արտացոլում են «Քննչական աշխատանքի մասին» (ՁԼ1 Մ) հաշվետվության (**այսուհետ՝ հաշվետվություն**) 1-ին բաժնի 1-ին աղյուսակի 1-ին և 2-րդ սյունակների 52-րդ տողում նշված վիճակագրական տվյալները: Մատնանշված տողում արտացոլված թվերն են հաշվարկվել հաշվետու ժամանակաշրջանում վարույթ ընդունված թվերին, որոնք էլ համապատասխանեցվել են վարույթում քննված քրեական գործերի բաշխման բանաձևին (հաշվետվության 1-ին բաժնի 2-րդ աղյուսակի 2-րդ տող, 1-ին և 2-րդ տողերի գումարի բաշխում):

Համեմատության համար նշենք, որ 2016թ. ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ է ներկայացվել մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին 1166 միջնորդություն, որոնցից բավարարվել է 1054-ը կամ 90.4%-ը, մերժվել է 112-ը կամ 9.6%-ը: Ներկայացված միջնորդություններից 114-ի կամ 10.8% դեպքում ընտրվել է կալանավորմանն այլընտրանքային խափանման միջոց՝ գրավ:

Այսպիսով, 2016 թ. համեմատ, 2017 թվականին կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդությունների քանակը 180-ով կամ 15.4%-ով նվազել է:

Կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդությունների բավարարման տոկոսային ցուցանիշն աճել է 2.1%-ով (92.5-90.4):

2017թ. ընթացքում կալանավորմանն այլընտրանքային խափանման միջոց՝ գրավ կիրառելու դեպքերն աճել են 4-ով կամ 3.5%-ով:

2017թ. ընթացքում ավարտված քրեական գործերի 51.8%-ը (2016թ.՝ 47.2%) քննվել է մինչև 2 ամիս, 22.4%-ը (2016թ.՝ 21.4%)՝ մինչև 4 ամիս, 11.9%-ը (2016թ.՝ 11.9%)՝ մինչև 6 ամիս, 11.0%-ը (2016թ.՝ 13.2%)՝ մինչև 1 տարի, 2.9%-ը (2016թ.՝ 6.3%)՝ 1 տարուց ավելի ժամկետում:

2017թ. ընթացքում դատարան ուղարկված 805 քրեական գործով պետությանը, իրավաբանական և ֆիզիկական անձանց պատճառվել է 18.915.259.674 ՀՀ դրամի գույքային վնաս (2016թ.՝ 7.967.987.514), որից պետությանը՝ 17.056.664.207 ՀՀ դրամի (2016թ.՝ 1.726.428.376), իրավաբանական անձանց՝ 511.028.612 ՀՀ դրամի (2016թ.՝ 2.882.023.648), ֆիզիկական անձանց՝ 1.347.566.855 ՀՀ դրամի վնաս (2016թ.՝ 3.359.535.490):

Նախաքննության ընթացքում վերականգնվել է 9.010.521.793 ՀՀ դրամի չափով գույքային վնաս (2016թ.՝ 2.306.789.748), որից պետությանը պատճառված վնաս՝ 8.754.199.883 ՀՀ դրամի (2016թ.՝ 1.216.492.417), իրավաբանական անձանց պատճառված վնաս՝ 105.645.190 ՀՀ դրամի (2016թ.՝ 863.484.819), ֆիզիկական անձանց պատճառված վնաս՝ 150.676.720 ՀՀ դրամի չափով (2016թ.՝ 226.812.512):

2017թ. ընթացքում քննված քրեական գործերով դատարան է ներկայացվել 4007 խուզարկության միջնորդություն (2016թ.՝ 3980), որոնցից 3819-ը՝ բնակարանի խուզարկություն կատարելու, իսկ 188-ը՝ բանկային, նոտարական գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու համար: Ներկայացված 4007 միջնորդությունից բավարարվել է 3895-ը կամ 97.2%-ը (2016թ.՝ 3853-ը կամ 96.8%-ը), մերժվել է 112-ը կամ 2.8%-ը (2016թ.՝ 127-ը կամ 3.2%-ը), որոնցից 105-ը՝ բնակարանի խուզարկության, իսկ 7-ը՝ բանկային, նոտարական գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման:

**ՀՀ քննչական կոմիտե**

2017թ. ընթացքում ՀՀ քննչական կոմիտեի կողմից քննվել է 15.803 քրեական գործ (2016թ.՝ 16.447): Նախորդ տարվա համեմատությամբ քննված քրեական գործերի թիվը նվազել է 644-ով կամ 3.9%-ով:

2017թ. քննված 15.803 քրեական գործից 1936-ը փոխանցվել է նախորդ տարվանից (2016թ.՝ 2362), որը 426-ով կամ 18.0%-ով պակաս է, քան 2016 թվականին, իսկ 13.867-ը վարույթ է ընդունվել 2017 թ. ընթացքում (2016թ.՝ 14.085), որը 218-ով կամ 1.5%-ով պակաս է, քան 2016 թվականին:

2017թ. վարույթ ընդունված 13.867 քրեական գործից 10.115-ը հարուցվել է հաշվետու ժամանակաշրջանում (2016թ.՝ 10.867), որոնցից 3159-ը հարուցվել է նախաքննության մարմինների (2016թ.՝ 8893), 6555-ը՝ հետաքննության մարմինների (2016թ.՝ 1598), իսկ 401-ը՝ դատախազների կողմից (2016թ.՝ 376):

2017թ. ավարտվել է 6238 քրեական գործի վարույթ (2016թ.՝ 6382), որոնցից 2422-ը 2929 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան (2016թ.՝ 2539 քրեական գործ 3194 անձի վերաբերյալ), 60-ը բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու միջնորդությամբ ուղարկվել է դատարան (2016թ.՝ 48), 3756-ը կարճվել է (2016թ.՝ 3794), այդ թվում՝ 1900-ը՝ արդարացնող (2016թ.՝ 2036), իսկ 1856-ը՝ ոչ արդարացնող հիմքով (2016թ.՝ 1758):

2017թ. ՀՀ-ում քրեական հետապնդում իրականացնող այլ մարմիններ է ուղարկվել 715 քրեական գործ (2016թ.՝ 878), 1510 քրեական գործ միացվել է (2016թ.՝ 1148), քրեական գործ հարուցելու մասին 4 որոշում վերացվել է դատախազների կողմից (2016թ.՝ 2):

Հաշվետու ժամանակաշրջանում 5369 քրեական գործով վարույթները կասեցվել են (2016թ.՝ 6057), որոնցից 4661-ը՝ քրեական գործով որպես մեղադրյալ ներգրավվելու ենթակա անձի անհայտ լինելու (2016թ.՝ 5474), 671-ը՝ անձի հետախուզման մեջ գտնվելու (2016թ.՝ 534), իսկ 37-ը՝ այլ հիմքերով (2016թ.՝ 49):

2017թ. վերջին անավարտ է մնացել 1967 քրեական գործ (2016թ.՝ 1980), որը 13-ով կամ 0.7%-ով պակաս է, քան 2016 թվականին:

2017թ. ձերբակալվել է 721 անձ, նախորդ տարվա 873-ի դիմաց, այսինքն՝ ձերբակալված անձանց թիվը նվազել է 152-ով կամ 17.4%-ով: Ձերբակալումից ազատվել է 165 անձ՝ 2016թ. 235-ի դիմաց, այսինքն՝ ձերբակալումից ազատված անձանց թիվը նվազել է 70-ով կամ 29.8%-ով:

2017թ. ՀՀ քննչական կոմիտեում քննված քրեական գործերով ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ է ներկայացվել մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին 822 միջնորդություն, որոնցից բավարարվել է 750-ը կամ 91.2%-ը, մերժվել՝ 72-ը կամ 8.8%-ը: 98 անձի նկատմամբ ընտրվել է կալանավորմանն այլընտրանքային խափանման միջոց՝ գրավ:

Համեմատության համար նշենք, որ 2016թ. ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ է ներկայացվել մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին 976 միջնորդություն, որոնցից բավարարվել է 868-ը կամ 88.9%-ը, մերժվել է 108-ը կամ 11.1%-ը: 94-ի դեպքում ընտրվել է կալանավորմանն այլընտրանքային խափանման միջոց՝ գրավ:

Այսպիսով, 2016 թ. համեմատ, 2017 թ. կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդությունների քանակը 154-ով կամ 15.8%-ով նվազել է, իսկ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդությունների բավարարման տոկոսային ցուցանիշն աճել է 2.3%-ով (91.2-88.9):

2017թ. ընթացքում կալանավորմանն այլընտրանքային խափանման միջոց՝ գրավ կիրառելու դեպքերն աճել են 4-ով կամ 4.3%-ով:

2017թ. ընթացքում ավարտված քրեական գործերի 54.0%-ը (2016թ.՝ 51.3%) քննվել է մինչև 2 ամիս, 22.5%-ը (2016թ.՝ 22.1%)՝ մինչև 4 ամիս, 11.3%-ը (2016թ.՝ 11.5%)՝ մինչև 6 ամիս, 10.6%-ը (2016թ.՝ 12.6%)՝ մինչև 1 տարի, 1.6%-ը (2016թ.՝ 2.6%)՝ 1 տարուց ավելի ժամկետում:

2017թ. ընթացքում դատարան ուղարկված 753 քրեական գործով պետությանը, իրավաբանական և ֆիզիկական անձանց պատճառվել է 1.984.349.378 ՀՀ դրամի գույքային վնաս (2016թ.՝ 6.514.604.514), որոնցից պետությանը՝ 151.271.411 ՀՀ դրամի (2016թ.՝ 701.029.883), իրավաբանական անձանց՝ 495.729.812 ՀՀ դրամի (2016թ.՝ 2.507.603.311), իսկ ֆիզիկական անձանց՝ 1.337.348.155 ՀՀ դրամի վնաս (2016թ.՝ 3.305.971.320):

Նախաքննության ընթացքում վերականգնվել է 305.961.520 ՀՀ դրամի չափով գույքային վնաս (2016թ.՝ 1.561.518.279), որից պետությանը պատճառված վնաս՝ 58.965.310 ՀՀ դրամի (2016թ.՝ 538.253.948), իրավաբանական անձանց պատճառված վնաս՝ 105.645.190 ՀՀ դրամի (2016թ.՝ 816.382.519), իսկ ֆիզիկական անձանց պատճառված վնաս՝ 141.351.020 ՀՀ դրամի չափով (2016թ.՝ 206.881.812):

2017թ. ընթացքում դատարան է ներկայացվել 2987 խուզարկության միջնորդություն (2016թ.՝ 3089), որոնցից 2887-ը՝ բնակարանի խուզարկություն կատարելու, իսկ 100-ը՝ բանկային, նոտարական գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու համար: Ներկայացված 2987 միջնորդությունից բավարարվել է 2879-ը կամ 96.4%-ը (2016թ.՝ 2965 կամ 96.0%), իսկ մերժվել է 108-ը կամ 3.6%-ը (2016թ.՝ 124 կամ 4.0%):

## ՀՀ հատուկ քննչական ծառայություն

2017 թ. ընթացքում ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից քննվել է 822 քրեական գործ (2016թ.՝ 753): Նախորդ տարվա համեմատությամբ քննված քրեական գործերի թիվը ավելացել է 69-ով կամ 9.2%-ով:

2017 թ. քննված 822 քրեական գործից 117-ը փոխանցվել է նախորդ տարվանից (2016թ.՝ 208), իսկ 705-ը վարույթ է ընդունվել 2017 թ. ընթացքում (2016թ.՝ 545):

2017 թ. վարույթ ընդունված 705 քրեական գործից 454-ը հարուցվել է հաշվետու ժամանակահատվածում (2016թ.՝ 327), որոնցից 439-ը՝ նախաքննության մարմինների (2016թ.՝ 305), իսկ 15-ը՝ դատախազների կողմից (2016թ.՝ 22) :

2017 թ. ավարտվել է 412 քրեական գործի վարույթ (2016թ.՝ 461), որոնցից 122-ը 264 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան (2016թ.՝ 110 քրեական գործ 182 անձի վերաբերյալ), 290-ը կարճվել է (2016թ.՝ 351), որոնցից 265-ը՝ արդարացնող (2016թ.՝ 319), իսկ 25-ը՝ ոչ արդարացնող հիմքով (2016թ.՝ 31):

2017 թ. ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից ՀՀ-ում քրեական հետապնդում իրականացնող այլ մարմիններ է ուղարկվել 138 քրեական գործ (2016թ.՝ 98), 108 քրեական գործ միացվել է (2016թ.՝ 28), քրեական գործ հարուցելու մասին 1 որոշում վերացվել է դատախազի կողմից:

Հաշվետու ժամանակաշրջանում 57 քրեական գործով վարույթները կասեցվել են (2016թ.՝49), որոնցից 35-ը՝ քրեական գործով որպես մեղադրյալ ներգրավվելու ենթակա անձի անհայտ լինելու (2016թ.՝ 31), 22-ը՝ անձի հետախուզման մեջ գտնվելու հիմքով (2016թ.՝ 15):

2017 թ. վերջին անավարտ է մնացել 106 քրեական գործ (2016թ.՝ 117), որը 11-ով կամ 9.4%-ով պակաս է, քան 2016 թվականին:

2017թ. ձերբակալվել է 61 անձ, նախորդ տարվա 39-ի դիմաց, այսինքն՝ ձերբակալված անձանց թիվն աճել է 22-ով կամ 56.4%-ով: Ձերբակալումից ազատվել է 19 անձ՝ 2016թ. 16-ի դիմաց, այսինքն՝ ձերբակալումից ազատված անձանց թիվն աճել է 3-ով կամ 18.8%-ով:

2017թ. ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քննվող քրեական գործերով ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ է ներկայացվել մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին 56 միջնորդություն, որոնցից բավարարվել է 54-ը կամ 96.4%-ը, մերժվել՝ 2-ը կամ 3.4%-ը: 9 անձի նկատմամբ ընտրվել է կալանավորմանն այլընտրանքային խափանման միջոց՝ գրավ:

Համեմատության համար նշենք, որ 2016թ. ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ է ներկայացվել մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին 58 միջնորդություն, որոնցից բավարարվել է 54-ը կամ 93.1%-ը, մերժվել է 4-ը կամ 6.9%-ը: 13 անձի

նկատմամբ ընտրվել է կալանավորմանն այլընտրանքային խափանման միջոց՝ գրավ:

Այսպիսով, 2016 թվականի համեմատ, 2017 թվականին կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդությունների քանակը նվազել է 2-ով կամ 3.4%-ով:

2017թ. ընթացքում կալանավորմանն այլընտրանքային խափանման միջոց՝ գրավ կիրառելու դեպքերը նվազել են 4-ով կամ 30.8%-ով:

2017թ. ընթացքում ավարտված քրեական գործերի 62.2%-ը (2016թ.՝ 28.0%) քննվել է մինչև 2 ամիս, 23.8%-ը (2016թ.՝ 23.5%)՝ մինչև 4 ամիս, 8.6%-ը (2016թ.՝ 19.7%)՝ մինչև 6 ամիս, 4.4%-ը (2016թ.՝ 22.2%)՝ մինչև 1 տարի, 1%-ը (2016թ.՝ 6.5%)՝ 1 տարուց ավելի ժամկետում:

2017թ. ընթացքում դատարան ուղարկված 6 քրեական գործով պետությանը, իրավաբանական և ֆիզիկական անձանց պատճառվել է 95.741.500 ՀՀ դրամի գույքային վնաս (2016թ.՝ 389.842.200), որից պետությանը՝ 77.497.000 ՀՀ դրամի (2016թ.՝ 19.342.000), իրավաբանական անձանց՝ 15.298.800 ՀՀ դրամի (2016թ.՝ 361.007.600), իսկ ֆիզիկական անձանց՝ 2.945.700 ՀՀ դրամի վնաս (2016թ.՝ 9.492.600):

Նախաքննության ընթացքում վերականգնվել է 10.142.700 ՀՀ դրամի չափով գույքային վնաս (2016թ.՝ 66.005.300), որից պետությանը պատճառված վնաս՝ 8.090.000 ՀՀ դրամի (2016թ.՝ 15.500.000), իսկ ֆիզիկական անձանց պատճառված վնաս ՝ 2.052.700 ՀՀ դրամի չափով (2016թ.՝ 3.403.000):

2017թ. ընթացքում դատարան է ներկայացվել 495 խուզարկության միջնորդություն (2016թ.՝ 615), որոնցից 461-ը՝ բնակարանի խուզարկություն կատարելու, իսկ 34-ը՝ բանկային, նոտարական գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու համար: Ներկայացված բոլոր միջնորդությունները բավարարվել են (2016թ. բավարարվել էր 612-ը կամ 99.5%-ը):

## ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչություն

2017 թ. ընթացքում ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչության կողմից քննվել է 749 քրեական գործ (2016թ.՝ 892): Նախորդ տարվա համեմատությամբ քննված քրեական գործերի թիվը նվազել է 143-ով կամ 16%-ով:

2017 թ. քննված 749 քրեական գործից 301-ը փոխանցվել է նախորդ տարվանից (2016թ.՝ 446), որը 145-ով կամ 32.5%-ով պակաս է, քան 2016 թվականին, իսկ 448-ը վարույթ է ընդունվել 2017 թ. ընթացքում (2016թ՝. 446), որը 2-ով կամ 0.4%-ով ավելի է, քան 2016 թվականին:

2017 թ. վարույթ ընդունված 448 քրեական գործից 382-ը հարուցվել է հաշվետու ժամանակահատվածում (2016թ.՝ 393), որոնցից 131-ը հարուցվել է

նախաքննության մարմինների (2016թ.՝ 60), 244-ը՝ հետաքննության մարմինների (2016թ.՝ 306), իսկ 7-ը՝ դատախազների կողմից (2016թ.՝ 27):

2017 թ. ավարտվել է 326 քրեական գործի վարույթ (2016թ.՝ 507), որոնցից 37-ը 44 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան (2016թ.՝ 27 քրեական գործ 27 անձի վերաբերյալ), իսկ 289-ը կարճվել է (2016թ.՝ 480), այդ թվում՝ 249-ը՝ արդարացնող (2016թ.՝ 455), իսկ 40-ը՝ ոչ արդարացնող հիմքով (2016թ.՝ 25):

2017 թ. ՀՀ-ում քրեական հետապնդում իրականացնող այլ մարմիններ է ուղարկվել 3 քրեական գործ (2016թ.՝ 8), իսկ 32 քրեական գործ միացվել է (2016թ.՝ 16):

Հաշվետու ժամանակաշրջանում 131 քրեական գործով վարույթները կասեցվել են (2016թ.՝ 60), որոնցից 83-ը (2016թ.՝ 17)՝ քրեական գործով որպես մեղադրյալ ներգրավվելու ենթակա անձի անհայտ լինելու, 48-ը (2016թ.՝ 41)՝ անձի հետախուզման մեջ գտնվելու հիմքով:

2017 թ. վերջին անավարտ է մնացել 257 քրեական գործ (2016թ.՝ 301), որը 44-ով կամ 14.6%-ով պակաս է, քան 2016 թվականին:

2017թ. ձերբակալվել է 23 անձ՝ նախորդ տարվա 18-ի դիմաց, այսինքն՝ ձերբակալված անձանց թիվն աճել է 5-ով կամ 27.8%-ով: Ձերբակալումից ազատվել է 3 անձ (2016թ.՝ 0):

2017թ. ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ է ներկայացվել մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին 23 միջնորդություն (2016թ.՝ 12): Ինչպես 2016թ., այնպես էլ 2017թ. ներկայացված բոլոր միջնորդությունները բավարարվել են: 2016թ. 1 անձի նկատմամբ ընտրվել է կալանավորմանն այլընտրանքային խափանման միջոց՝ գրավ (2017թ.՝ 0):

2016 թ. համեմատ, 2017 թ. կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդությունների քանակը 11-ով կամ 91.7%-ով աճել է:

2017թ. ընթացքում ավարտված քրեական գործերի 11.7%-ը (2016թ.՝ 14.8%)՝ քննվել է մինչև 2 ամիս, 17.2%-ը (2016թ.՝ 10.7%)՝ մինչև 4 ամիս, 18.4%-ը (2016թ.՝ 7.7%)՝ մինչև 6 ամիս, 22.1%-ը (2016թ.՝ 15.0%)՝ մինչև 1 տարի, 30.7%-ը (2016թ.՝ 51.9%)՝ 1 տարուց ավելի ժամկետում:

2017թ. ընթացքում դատարան ուղարկված 37 քրեական գործով պետությանը պատճառվել է 15.741.345.294 ՀՀ դրամի գույքային վնաս (2016թ.՝ 124.570.306):

Նախաքննության ընթացքում վերականգնվել է 8.462.655.521 ՀՀ դրամի չափով (2016թ.՝ 22.276.434) պետությանը պատճառված վնաս:

2017թ. ընթացքում դատարան է ներկայացվել 123 խուզարկության միջնորդություն (2016թ.՝ 81), որոնցից 104-ը՝ բնակարանի խուզարկություն կատարելու, իսկ 19-ը՝ բանկային, նոտարական գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու համար: Ներկայացված 123 միջնորդությունից

բավարարվել է 119-ը կամ 96.7%-ը (2016թ.՝ 81 կամ 100%), մերժվել է 4-ը կամ 3.2%-ը (2016թ.՝ 0):

## ՀՀ ԱԱԾ քննչական վարչություն

2017 թ. ընթացքում ՀՀ ԱԱԾ քննչական վարչության կողմից քննվել է 334 քրեական գործ (2016թ.՝ 387): Նախորդ տարվա համեմատությամբ քննված քրեական գործերի թիվը նվազել է 53-ով կամ 13.7%-ով:

2017 թ. քննված 334 քրեական գործից 110-ը փոխանցվել է նախորդ տարվանից (2016թ.՝ 139), որը 29-ով կամ 20.9%-ով պակաս է, քան 2016 թվականին, իսկ 224-ը վարույթ է ընդունվել 2017 թ. ընթացքում (2016թ.՝ 248), որը 24-ով կամ 9.7%-ով պակաս է, քան 2016 թվականին:

2017 թ. վարույթ ընդունված 224 քրեական գործից 201-ը հարուցվել է հաշվետու ժամանակահատվածում (2016թ.՝ 191), ընդ որում՝ բոլոր քրեական գործերը հարուցվել են նախաքննության մարմինների կողմից:

2017 թ. ավարտվել է 127 քրեական գործի վարույթ (2016թ.՝ 118), որոնցից 105-ը 210 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան (2016թ.՝ 85 քրեական գործ 131 անձի վերաբերյալ), 1-ը՝ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու միջնորդությամբ ուղարկվել է դատարան (2016թ՝ 0), իսկ 21-ը կարճվել է (2016թ.՝ 33), այդ թվում, 16-ը՝ արդարացնող (2016թ՝ 33), 5-ը՝ ոչ արդարացնող հիմքով (2016թ.՝ 0):

2017 թ. ՀՀ-ում քրեական հետապնդում իրականացնող այլ մարմիններ է ուղարկվել 42 քրեական գործ (2016թ.՝ 61), իսկ 29 քրեական գործ միացվել է (2016թ.՝ 27):

Հաշվետու ժամանակաշրջանում 78 քրեական գործով վարույթները կասեցվել են (2016թ.՝ 71), որոնցից 36-ը՝ քրեական գործով որպես մեղադրյալ ներգրավվելու ենթակա անձի անհայտ լինելու (2016թ.՝ 43), 38-ը՝ անձի հետախուզման մեջ գտնվելու (2016թ.՝ 26), իսկ 4-ը՝ այլ հիմքերով (2016թ.՝ 2):

2017 թ. վերջին անավարտ է մնացել 58 քրեական գործ (2016թ.՝ 110), որը 52-ով կամ 47.2%-ով պակաս է, քան 2016 թվականին:

2017թ. ձերբակալվել է 87 անձ՝ նախորդ տարվա 64-ի դիմաց, այսինքն՝ ձերբակալված անձանց թիվն աճել է 23-ով կամ 35.9%-ով: Ձերբակալումից անձինք չեն ազատվել:

2017թ. ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ է ներկայացվել մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին 85 միջնորդություն, որոնք բոլորն էլ բավարարվել են: Ներկայացված միջնորդություններից 10-ի դեպքում ընտրվել է կալանավորմանն այլընտրանքային խափանման միջոց՝ գրավ:

Համեմատության համար նշենք, որ 2016թ. ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ է ներկայացվել մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին 120 միջնորդություն, որոնք բոլորն էլ բավարարվել են: 6-ի դեպքում ընտրվել է կալանավորմանն այլընտրանքային խափանման միջոց՝ գրավ:

Այսպիսով, 2016 թ. համեմատ, 2017 թ. կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդությունների թիվը պակասել է 35-ով կամ 29.2%-ով:

2017թ. ընթացքում կալանավորմանն այլընտրանքային խափանման միջոց՝ գրավ կիրառելու դեպքերն աճել են 4-ով կամ 66.7%-ով:

2017թ. ընթացքում ավարտված քրեական գործերի 19.8%-ը (2016թ.՝ 50.8%) քննվել է մինչև 2 ամիս, 24.6%-ը (2016թ.՝ 21.2%)՝ մինչև 4 ամիս, 35.7%-ը (2016թ.՝ 25.4%)՝ մինչև 6 ամիս, 19.8%-ը (2016թ.՝ 2.5%)՝ մինչև 1 տարի:

2017թ. ընթացքում դատարան ուղարկված 9 քրեական գործով պետությանը և ֆիզիկական անձանց պատճառվել է 1.093.823.502 ՀՀ դրամի գույքային վնաս (2016թ.՝ 938.970.494), որից պետությանը՝ 1.086.550.502 ՀՀ դրամի (2016թ.՝ 881.486.187), իսկ ֆիզիկական անձանց՝ 7.273.000 ՀՀ դրամի վնաս (2016թ.՝ 44.071.570):

Նախաքննության ընթացքում վերականգնվել է 231.762.052 ՀՀ դրամի վնաս (2016թ.՝ 656.989.735), որից պետությանը պատճառված վնաս՝ 224.489.052 ՀՀ դրամի (2016թ.՝ 640.462.035), ֆիզիկական անձանց պատճառված վնաս՝ 7.273.000 ՀՀ դրամի չափով (2016թ.՝ 16.527.700):

2017թ. ընթացքում դատարան է ներկայացվել 402 խուզարկության միջնորդություն (2016թ.՝ 195), որոնցից 367-ը՝ բնակարանի խուզարկություն կատարելու, իսկ 35-ը՝ բանկային, նոտարական գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու համար: Բոլոր միջնորդությունները բավարարվել են (2016թ.՝ 195 կամ 100%):

Ամփոփելով վերոգրյալը պետք է նշել հետևյալը.

1. 2017թ. քննված 17.708 քրեական գործից 15.803-ը կամ 89.2%-ը քննվել է ՀՀ քննչական կոմիտեի, 822-ը կամ 4.7%-ը՝ ՀՀ ՀՔԾ-ի, 749-ը կամ 4.2%-ը՝ ՀՀ ՊԵԿ քննչական վարչության, իսկ 334-ը կամ 1.9%-ը՝ ՀՀ ԱԱԾ քննչական վարչության վարույթում:

2. 2017 թվականին Հայաստանի Հանրապետության նախաքննության մարմինների քննիչների զբաղվածությունը նվազել է: Եթե 2016թ. Հայաստանի Հանրապետության նախաքննության մարմինների քննիչների կողմից քննվել է 18.479 քրեական գործ, ապա 2017թ.՝ ընդամենը 17.708 քրեական գործ, այսինքն՝ 771-ով կամ 4.2%-ով պակաս:

2017թ. էականորեն նվազել է նախաքննության մարմինների կողմից հարուցված քրեական գործերի թիվը:

Այսպես, եթե 2016թ. հարուցված 11.778 քրեական գործից 9445-ը կամ 80.2%-ը հարուցվել է նախաքննության մարմինների կողմից, իսկ 1904-ը կամ 16.2%-ը՝ հետաքննության մարմինների կողմից, ապա 2017թ. հարուցված 11.152 քրեական գործից նախաքննության մարմինների կողմից հարուցվել է ընդամենը 3930-ը կամ 35.2%-ը, իսկ 6799-ը կամ 70%-ը՝ հետաքննության մարմինների կողմից:

Նշվածը դրականորեն է ազդում քննության արդյունավետության վրա, քանի որ դրանով իսկ ապահովվում է հարուցման օպերատիվությունը՝ անհետաձգելի գործողությունների կատարման հաշվառմամբ:

3. 2016թ. համեմատ, 2017թ. 180-ով կամ 15.4%-ով նվազել է կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդությունների թիվը: Միաժամանակ, 2.1%-ով (9.6-7.5) նվազել է կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդությունների մերժման տոկոսային ցուցանիշը:

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ 2017թ. ընթացքում կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդությունների նվազումը ու դրանց մերժման ցուցանիշի տոկոսային նվազումը ուղղակիորեն կապված է Հայաստանի Հանրապետության դատախազության կողմից՝ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու և կալանքի ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունների հիմնավորվածության և իրավաչափության միասնական չափանիշներ սահմանելու և կիրառելու հետ:

Այսպես.

2017թ. հուլիսի 3-ին դատախազության օրվան նվիրված հանդիսավոր նիստում Հանրապետության Նախագահի կողմից իրավապահ գործունեության ընթացքում ազատության և անձեռնմխելիության հիմնարար կոնվենցիոնալ իրավունքների ապահովման առանձնահատուկ կարևորությունն ընդգծելուց հետո, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի հանձնարարությամբ ստեղծված աշխատանքային խումբն ուսումնասիրել և վերհանել է այս ոլորտում առկա գործնական խնդիրներն ու առաջարկվել հստակ լուծումներ:

Ուսումնասիրության շրջանակներում վերլուծվել են ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի վերաբերյալ ՄԻԵԴ-ի ձևավորած նախադեպային իրավունքը և ներպետական իրավական կարգավորումները:

Հատուկ ուշադրության և վերլուծության են արժանացել Հայաստանի դեմ գործերով ՄԻԵԴ-ի վճիռներում արձանագրված իրավիճակներն ու խախտումները՝ փաստելով, որ դրանք հետևանք են նաև կալանավորման հիմքերի պարզմանն ու հիմնավորմանն ուղղված բավարար միջոցներ չձեռնարկելու, ինչպես նաև, նման փաստական տվյալների տիրապետելու դեպքում, անհետևողականության կամ չիմացության պատճառով խափանման միջոց կալանավորում կիրառելու բավարար հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում, քննիչի կողմից դրանք միջնորդության մեջ չարտացոլելու և չվերլուծելու:

Աշխատանքային խմբի ուսումնասիրության արդյունքները քննարկվել են ՀՀ դատախազության կոլեգիայի նիստում, որի արդյունքում ընդունված որոշմամբ հստակ սահմանվել են նախքան կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը ներկայացնելը, դրա հիմնավորվածությունն ապահովելու նպատակով ձեռնարկվելիք պարտադիր դատավարական և օպերատիվ-հետախուզական միջոցառումները: Դատախազներին հանձնարարվել է նաև ապահովել, որպեսզի կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունները բովանդակեն գործի քննությունն ապահովելու ուղղությամբ քննության մարմնի դրսևորած պատշաճ ջանասիրությունը հիմնավորելու համար անհրաժեշտ տեղեկատվություն՝ ցույց տալով արդեն իսկ կատարված քննչական և դատավարական գործողությունների ծավալը, ինչպես նաև ներկայացնելով տվյալներ կատարվելիք գործողությունների մասին, հիմնավորելով, որ դրանք ավելի վաղ չէին կարող կատարվել:

Պետք է փաստել, որ վերը նշված չափանիշների սահմանումն ու կիրառումը նպաստել է նաև նրան, որ կալանքի տակ գտնվող մեղադրյալների վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունն ավարտվել է ավելի սեղմ ժամկետներում:

Այսպես, եթե 2016թ. նման քրեական գործերի 35%-ն է քննվել մինչև երկու ամիս ժամկետում, ապա 2017թ.՝ 38%-ը, եթե 2016թ. ծանր և առանձնապես ծանր հանցագործություններով նման քրեական գործերի 30%-ն է քննվել մինչև երկու ամիս ժամկետում, ապա 2017թ.՝ 35%-ը, եթե 2016թ. միջին և ոչ մեծ ծանրության նման քրեական գործերի 47%-ն է քննվել մինչև երկու ամիս ժամկետում, ապա 2017թ.՝ 51%-ը: Եթե 2016թ միջին և ոչ մեծ ծանրության նման քրեական գործերի 75%-ն է քննվել մինչև չորս ամիս ժամկետում, ապա 2017թ.՝ 84%-ը:

4. 2017թ. ընթացքում էական դրական ցուցանիշ է արձանագրվել հանցագործությունների արդյունքում պետությանը, իրավաբանական և ֆիզիկական անձանց պատճառված գույքային վնասի վերականգնման բնագավառում:

2017թ. դատարան ուղարկված քրեական գործերով վերականգնվել է պետությանը, իրավաբանական և ֆիզիկական անձանց պատճառված շուրջ 4 անգամ ավելի գույքային վնաս, քան 2016 թվականին դատարան ուղարկված քրեական գործերով:

Այսպես, եթե 2016թ. վերականգնվել է ընդամենը 2.306.789.748 ՀՀ դրամի չափով գույքային վնաս, ապա 2017թ. վերականգնված վնասի չափը կազմել է 9.010.521.793 ՀՀ դրամ, որից՝ պետությանը պատճառված վնաս՝ 8.754.199.883 ՀՀ դրամ (2016թ.՝ 1.216.492.417):

5. 2016թ. համեմատությամբ 2017թ. քննված քրեական գործերի թվի նվազման պայմաններում, 2017թ. 0.9%-ով աճել է ավարտված քրեական գործերի թվում մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված քրեական գործերի

տոկոսային ցուցանիշը: Եթե 2016թ. այդ ցուցանիշը կազմել է 36.9%, ապա 2017թ.՝ 37.8%:

Այս առումով հանրապետական միջին ցուցանիշից էական դրական ցուցանիշ է արձանագրվել ՀՀ ԱԱԾ քննչական վարչության կողմից, որի վարույթում ավարտված 127 քրեական գործից 105-ը կամ 82.7%-ը ուղարկվել է դատարան:

6. 2017 թվականին հանցագործությունների քննության ընթացքում արձանագրված դրական ցուցանիշների հետ մեկտեղ, հետաքննության և նախաքննության համապատասխան մարմինների ծառայողների գործողություններում դատախազների կողմից հայտնաբերվել են որոշակի բացթողումներ և խախտումներ, որոնց կապակցությամբ դատախազության կողմից ձեռնարկվել են համապատասխան ներգործության միջոցներ:

Այսպես.

Դատախազական աշխատանքի ընթացքում վեր են հանվել քրեական գործերի քննության մի շարք ընդհանուր թերություններ՝ կապված անհետաձգելի համարվող գործողությունները ժամանակին չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ապացույցների ոչ պատշաճ հավաքման և ստուգման հետ, որոնք բացասաբար են ազդել գործերի ելքի վրա, և որոնց բացառումը կարող է էականորեն դրական ազդեցություն ունենալ հանցագործության դեպքերի բացահայտման ցուցանիշի վրա:

Մասնավորապես՝ ՀՀ գլխավոր դատախազությունում հատկապես ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների դեպքերով քննվող քրեական գործերի քննարկումների և ստուգման ընթացքում պարզվել է, որ դեպքի վայրի զննության ընթացքում հաճախ չեն արձանագրվում կարևոր ապացույցների վերաբերյալ տվյալներ, օրինակ՝ տեսախցիկների առկայությունը, բացի մատնահետքերից, որպես կանոն, մարդու հետքերի այլ նմուշներ փնտրելուն ուղղված գործողություններ չեն կատարվում, լուսանկարում կամ չի կատարվում կամ կատարվում է՝ առանց կրիմինալիստիկական կանոնների պահպանման: Դեպքի վայրում գտնվող ականատեսներին ժամանակին չեն հրավիրում հարցաքննության, իսկ հետո դժվարանում է նրանց կամ նրանց գտնվելու տեղի պարզումը:

Նշենք, որ հաշվետու ժամանակահատվածի ողջ ընթացքում ՀՀ գլխավոր դատախազությունում ՀՀ ոստիկանության և ՀՀ քննչական կոմիտեի ներկայացուցիչների մասնակցությամբ կազմակերպվել են օպերատիվ խորհրդակցություններ՝ կոնկրետ քրեական գործերով, հիմնականում ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների բացահայտման կամ բացահայտված հանցագործություններով ապացույցների հավաքման նպատակով: Այդ ընթացքում վարկածների առաջ քաշումը, օպերատիվ-հետախուզական և քննչական համագործակցված աշխատանքի տակտիկայի համատեղ քննարկումը, մշակումն ու պլանավորումը, մի շարք դեպքերում, կարճ ժամանակ անց տվել են իրենց

դրական արդյունքները. բացահայտվել են հանցագործություններ, ձեռք բերվել անհրաժեշտ ապացույցներ, ինչի հավանականությունը որոշ դեպքերում, ի սկզբանե, եղել է ցածր:

Համապատասխան մարմինների ղեկավար անձնակազմի ուշադրությունը առանձին գործերով նախաքննության և հետաքննության, օպերատիվ-հետախուզական աշխատանքների ընթացքում արձանագրված էական խնդիրների, բացթողումների, սխալների վրա հրավիրելու, դրանք վերացնելու ուղղությամբ քայլեր ձեռնարկելու նպատակով, 2017թ. ընթացքում հետաքննության և նախաքննության մարմինների աշխատակիցների նկատմամբ ծառայողական քննություններ անցկացնելու վերաբերյալ դատախազների կողմից ներկայացվել է ընդհանուր առմամբ 223 միջնորդություն, որոնցից 127-ը՝ նախաքննության, 96-ը՝ հետաքննության մարմինների աշխատակիցների վերաբերյալ: 91 անձ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության, որոնցից 18-ը՝ նախաքննության, 73-ը՝ հետաքննության մարմինների աշխատակիցներ: Նախաքննության մարմնի 1 և հետաքննության մարմնի 6 աշխատակից ազատվել է զբաղեցրած պաշտոնից:

30 անձի վերաբերյալ հարցը քննարկվել է օպերատիվ խորհրդակցություններում (12-ը նախաքննության, 18-ը՝ հետաքննության մարմնի աշխատակից): 65 անձի վերաբերյալ վարույթներ չեն հարուցվել, որոնցից 54-ը նախաքննության, 11-ը՝ հետաքննության մարմնի աշխատակցի վերաբերյալ:

Նախաքննության մարմնի 22 և հետաքննության մարմնի 11 աշխատակցի վերաբերյալ ծառայողական ուսումնասիրությունը գտնվում է ընթացքում:

Քրեական գործերով դատավարական ղեկավարման և դատախազական հսկողության իրենց գործառույթների իրականացման ընթացքում դատախազների կողմից 2017թ. ձեռք են բերվել քննիչների կողմից՝ իրենց ծառայողական գործունեության հետ կապված առերևույթ հանցագործության մասին տվյալներ, որոնցով քննված 5 քրեական գործ՝ 5 քննիչների վերաբերյալ, ուղարկվել է դատարան:

Նույն գործառույթների իրականացման շրջանակներում դատախազների կողմից հայտնաբերված՝ հետաքննության մարմինների պետական հատուկ ծառայություն իրականացնող պաշտոնատար անձանց կողմից իրենց ծառայողական գործունեության հետ կապված առերևույթ հանցագործության դեպքերի առթիվ 2017թ. ընթացքում քննվել է 5 քրեական գործ, որոնցից մեկը՝ երեք անձի վերաբերյալ, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

## ՏԵՂԵԿԱՆՔ

**կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ**

2017թ. հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ իրավասու մարմինների վարույթում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ նախապատրաստվել է ընդամենը 500 նյութ (որից քննչական կոմիտե-197, հատուկ քննչական ծառայություն-268, ԱԱԾ քննչական վարչություն-32, ՊԵԿ քննչական վարչություն-3), որից 403-ով (որից քննչական կոմիտե-176, հատուկ քննչական ծառայություն-192, ԱԱԾ քննչական վարչություն-32, ՊԵԿ քննչական վարչություն-3) հարուցվել են քրեական գործեր, 96-ով՝ քրեական գործ հարուցելը մերժվել է, որից 90-ը՝ արդարացման, 6-ը՝ ոչ արդարացման հիմքով: Քրեական գործ հարուցելը մերժելու մասին 1 նյութի որոշում վերացվել և հարուցվել է քրեական գործ՝ դատախազի կողմից: Բացի հարուցված 403 քրեական գործից հաշվետու ժամանակաշրջանում վարույթ է ընդունվել 357 քրեական գործ, որից 57-ը՝ նախկինում կարճված կամ կասեցված և վարույթը վերսկսված, 224-ը՝ այլ մարմնից ստացված, 2-ը՝ դատախազի կողմից լրացուցիչ քննության վերադարձված և 74-ը՝ քննվող քրեական գործերից անջատված մասեր, ինչպես նաև վարույթում են գտնվել նախորդ տարվանից փոխանցված 245 քրեական գործ:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ նախաքննական մարմինների վարույթում քննված ընդհանուրը 1005 քրեական գործից ընդամենը ավարտվել է 520 գործի վարույթ, որից 309-ի վարույթը կարճվել է արդարացման, իսկ 62-ինը՝ ոչ արդարացման հիմքերով: Վարույթը ավարտված մնացած 149 քրեական գործից 148-ը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարան, իսկ 1 քրեական գործ ուղարկվել է դատարան՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու միջնորդությամբ:

Նշված ժամանակահատվածում վարույթում գտնվող 1005 քրեական գործից 79-ի վարույթը կասեցվել է, որից 51-ինը անձը հայտնի չլինելու, 27-ինը՝ անձի հետախուզման մեջ գտնվելու, իսկ 1-ինը՝ այլ հիմքերով: 72 քրեական գործ ուղարկվել է ըստ ենթակայության, 98 գործ՝ միացվել է, 236 գործի նախաքննություն փոխանցվել է 2018թ.:

**2017թ. ընթացքում ՀՀ նախաքննական մարմինների վարույթում քննված կոռուպցիոն բնույթի 1005** (որից քննչական կոմիտե-542, հատուկ քննչական ծառայություն-388, ԱԱԾ քննչական վարչություն-68, ՊԵԿ քննչական վարչություն-7) **քրեական գործերով քրեական հետապնդման են ենթարկվել ընդհանուրը 599** (որից քննչական կոմիտե-366, հատուկ քննչական ծառայություն-170, ԱԱԾ քննչական վարչություն-62, ՊԵԿ քննչական վարչություն-1) **անձինք**:

Քրեական հետապնդման ենթարկված 599 անձանցից 114-ը (որից քննչական կոմիտե-23, հատուկ քննչական ծառայություն-58, ԱԱԾ քննչական վարչություն-32, ՊԵԿ քննչական վարչություն-1) ձերբակալվել է, նրանցից 27-ը ազատվել ձերբակալումից: Քրեական հետապնդման ենթարկված անձանցից 498-ի (որից քննչական կոմիտե-265, հատուկ

քննչական ծառայություն-170, ԱԱԾ քննչական վարչություն-62, ՊԵԿ քննչական վարչություն-1) վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 494 (որից քննչական կոմիտե-262, հատուկ քննչական ծառայություն-170, ԱԱԾ քննչական վարչություն-61, ՊԵԿ քննչական վարչություն-1) անձի մեղադրանք է առաջադրվել: 116 (որից քննչական կոմիտե-41, հատուկ քննչական ծառայություն-44, ԱԱԾ քննչական վարչություն-30, ՊԵԿ քննչական վարչություն-1) անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որից 4-ը մերժվել է, 112-ը՝ բավարարվել, 25 անձի նկատմամբ որպես այլընտրանքային խափանման միջոց կիրառվել է գրավ: 32 մեղադրյալի պաշտոնավարում դադարեցվել է: 16 մեղադրյալ ազատվել է կալանքից, որից դատախազի կողմից 7-ը, դատարանի կողմից՝ 7-ը, 2-ը՝ ժամկետը լրանալու պատճառով: 151 (որից քննչական կոմիտե-122, հատուկ քննչական ծառայություն-28, ԱԱԾ քննչական վարչություն-1) անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է, որից 76-ինը՝ արդարացման, 75-ինը՝ ոչ արդարացման հիմքով: Դատախազի կողմից վերացվել է քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 2 որոշում: Դատի է տրվել 300 (որից քննչական կոմիտե-137, հատուկ քննչական ծառայություն-111, ԱԱԾ քննչական վարչություն-52) անձ, որից 64-ը (որից քննչական կոմիտե-11, հատուկ քննչական ծառայություն-42, ԱԱԾ քննչական վարչություն-11) գտնվել է կալանքի տակ, 1 անձի վերաբերյալ քրեական գործն ուղարկվել է դատարան՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու միջնորդությամբ: Քրեական հետապնդման ենթարկված 152 (որից քննչական կոմիտե-116, հատուկ քննչական ծառայություն-27, ԱԱԾ քննչական վարչություն-8, ՊԵԿ քննչական վարչություն-1) անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2018թ., նշված անձանցից 23-ը գտնվել են կալանքի տակ:

**Ըստ կոռուպցիոն բնույթի առանձին հանցատեսակների հաշվետու տարում նախապատրաստված նյութերի և քննված քրեական գործերի շարժը ունեցել է հետևյալ պատկերը՝**

2017թ. ընթացքում **պաշտոնեական դիրքի օգտագործմամբ ընտրական իրավունքի իրականացմանը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու (ՀՀ քր. օր 149-րդ հոդված)** վերաբերյալ նախապատրաստվել է 1 նյութ, որով քրեական գործի հարուցումը մերժվել է՝ արդարացման հիմքով:

**Պաշտոնեական դիրքի օգտագործմամբ կատարված խարդախությունների (ՀՀ քր. օր 178-րդ հոդված)** վերաբերյալ նախապատրաստվել է 8 նյութ, որից 5-ով հարուցվել է քրեական գործ, 3-ով՝ քրեական գործի հարուցումը մերժվել է՝ արդարացման հիմքով: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 21 քրեական գործ, որից ընդամենը ավարտվել է 8 քրեական գործի վարույթ, այդ թվում 2 գործի վարույթ կարճվել է արդարացման, 1-ինը՝ ոչ արդարացման հիմքերով, իսկ 5 գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 2 գործի վարույթ կասեցվել է անձի հետախուզման մեջ գտնվելու հիմքով: 3 գործ ուղարկվել է ըստ ենթակայության, 4 գործ

միացվել է, իսկ 4 գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

2017թ. ընթացքում նշված հանցագործության վերաբերյալ քննված 21 (որից քննչական կոմիտե-4, հատուկ քննչական ծառայություն-14, ԱԱԾ քննչական վարչություն-2, ՊԵԿ քննչական վարչություն-1) քրեական գործով քրեական հետապնդման է ենթարկվել ընդհանուրը 18 (որից քննչական կոմիտե-10, հատուկ քննչական ծառայություն-7, ԱԱԾ քննչական վարչություն-1)անձինք:

Քրեական հետապնդման ենթարկված 18 անձանցից 6-ը ձերբակալվել է, նրանցից 2-ը ազատվել ձերբակալումից: Քրեական հետապնդման ենթարկված անձանցից 13-ի վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 13 անձի մեղադրանք է առաջադրվել: 6 անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որից 1-ը մերժվել է, 5-ը՝ բավարարվել, 1 անձի նկատմամբ որպես այլընտրանքային խափանման միջոց կիրառվել է գրավ: 3 մեղադրյալի պաշտոնավարում դադարեցվել է: 1 մեղադրյալ ազատվել է կալանքից՝ դատախազի կողմից: 6 անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է, որից 3-ինը՝ արդարացման, 3-ինը՝ ոչ արդարացման հիմքով: Դատի է տրվել 7 անձ, որից 5-ը գտնվել է կալանքի տակ: Քրեական հետապնդման ենթարկված 4 անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2018թ.:

**Պաշտոնեական դիրքի օգտագործմամբ կատարված յուրացման կամ վատնման (ՀՀ քր. օր 179-րդ հոդված)** վերաբերյալ նախապատրաստվել է 37 նյութ, որից 34-ով հարուցվել է քրեական գործ, 3-ով՝ քրեական գործի հարուցումը մերժվել է, որից 2-ով արդարացման, իսկ 1-ով՝ ոչ արդարացման հիմքով: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 101 քրեական գործ, որից ընդամենը ավարտվել է 54 քրեական գործի վարույթ, այդ թվում 14 գործի վարույթ կարճվել է արդարացման, 12-ինը ոչ արդարացման հիմքերով, իսկ 28 գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 10 գործի վարույթ կասեցվել է, որից 7-ինը՝ անձը հայտնի չլինելու, իսկ 3-ինը՝ անձի հետախուզման մեջ գտնվելու հիմքով: 7 գործ ուղարկվել է ըստ ենթակայության, 3 գործ միացվել է, իսկ 27 գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված 101 (որից քննչական կոմիտե-86, հատուկ քննչական ծառայություն-7, ԱԱԾ քննչական վարչություն-7, ՊԵԿ քննչական վարչություն-1) քրեական գործով քրեական հետապնդման է ենթարկվել ընդհանուրը 87 (որից քննչական կոմիտե-76, հատուկ քննչական ծառայություն-6, ԱԱԾ քննչական վարչություն-5) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 87 անձանցից 2-ը ձերբակալվել է, նրանցից 1-ը ազատվել ձերբակալումից: Քրեական հետապնդման ենթարկված անձանցից 69-ի վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 72 անձի մեղադրանք է առաջադրվել: 10 անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որոնք բավարարվել են, 3 անձի նկատմամբ որպես

այլընտրանքային խափանման միջոց կիրառվել է գրավ: 4 մեղադրյալի պաշտոնավարում դադարեցվել է: 5 մեղադրյալ ազատվել է կալանքից, որից 3-ը՝ դատախազի, 2-ը՝ դատարանի կողմից: 23 անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է, որից 6-ինը՝ արդարացման, 17-ինը՝ ոչ արդարացման հիմքով: Դատախազի կողմից վերացվել է քրեական հետապնդումը դադարեցնելու 1 որոշում: Դատի է տրվել 51 անձ, որից 1-ը գտնվել է կալանքի տակ: Քրեական հետապնդման ենթարկված 18 անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2018թ., նշված անձանցից 1-ը գտնվել է կալանքի տակ:

**Պաշտոնեական դիրքի օգտագործմամբ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելու (ՀՀ քր. օր 184-րդ հոդված)** վերաբերյալ 2017թ.-ի ընթացքում վարույթում քննվել է 1 քրեական գործ, որը միացվել է:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված քրեական գործով քրեական հետապնդման ենթարկված անձ չի եղել:

**Փողերի լվացման (ՀՀ քր. օր 190-րդ հոդված)** վերաբերյալ նյութեր չեն նախապատրաստվել: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 8 քրեական գործ, որից ընդամենը ավարտվել է 1 քրեական գործի վարույթ, որը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 1 գործի վարույթ կասեցվել է անձի հետախուզման մեջ գտնվելու հիմքով: 1 գործ միացվել է, իսկ 5 գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ ԱԱԾ քննչական վարչությունում քննված 8 քրեական գործով քրեական հետապնդման է ենթարկվել ընդհանուրը 5 անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 5 անձանցից 3-ը ձերբակալվել է: 5 անձի վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 5 անձի մեղադրանք է առաջադրվել: 3 անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որոնք բավարարվել են: Դատի է տրվել 5 անձ, որից 3-ը գտնվել է կալանքի տակ:

**Առևտրային կաշառքի (ՀՀ քր. օր 200-րդ հոդված)** վերաբերյալ նախապատրաստվել է 4 նյութ, որոնցով հարուցվել է 4 քրեական գործ: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 17 քրեական գործ, որից ընդամենը ավարտվել է 11 քրեական գործի վարույթ, այդ թվում 5 գործի վարույթ կարճվել է արդարացման հիմքերով, իսկ 6 գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 2 գործ ուղարկվել է ըստ ենթակայության, իսկ 4 գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

2017թ. ընթացքում նշված հանցագործության վերաբերյալ քննված 17 (որից քննչական կոմիտե-11, հատուկ քննչական ծառայություն-1, ԱԱԾ քննչական վարչություն-5) քրեական գործով քրեական հետապնդման է ենթարկվել ընդհանուրը 8 (որից քննչական կոմիտե-3, հատուկ քննչական ծառայություն-1, ԱԱԾ քննչական վարչություն-4) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 8 անձանցից 1-ը ձերբակալվել է: 8 անձի վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 8 անձի մեղադրանք է առաջադրվել: 1 անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որը մերժվել է: 1 անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է արդարացման հիմքով: Դատի է տրվել 3 անձ: Քրեական հետապնդման ենթարկված 4 անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2018թ., նշված անձանցից 1-ը գտնվել է կալանքի տակ:

**Արհեստավարժ մարզամրցումների և հանդիսավոր առևտրային մրցույթների մասնակիցներին ու կազմակրպիչներին կաշառելու (ՀՀ քր. օր 201-րդ հոդված)** վերաբերյալ նախապատրաստվել է 3 նյութ, որոնցով հարուցվել են քրեական գործեր: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 7 քրեական գործ, որից ընդամենը ավարտվել է 2 քրեական գործի վարույթ, այդ թվում 1 գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, իսկ 1 գործ ուղարկվել է դատարան բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու միջնորդությամբ: 2 գործի վարույթ կասեցվել է անձը հայտնի չլինելու հիմքով: 2 գործ ուղարկվել է ըստ ենթակայության, իսկ 1 գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

2017թ. ընթացքում նշված հանցագործության վերաբերյալ քննված 7 (որից քննչական կոմիտե-2, ԱԱԾ քննչական վարչություն-5) քրեական գործով քրեական հետապնդման է ենթարկվել ընդհանուրը 5 (որից ԱԱԾ քննչական վարչություն-5) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 5 անձից 4-ը ձերբակալվել է: 5-ի վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 5 անձի մեղադրանք է առաջադրվել: 4 անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որոնք բավարարվել են, 1 անձի նկատմամբ որպես այլընտրանքային խափանման միջոց կիրառվել է գրավ: 2 մեղադրյալ ազատվել է կալանքից: Դատի է տրվել 4 անձ: 1 անձի վերաբերյալ քրեական գործն ուղարկվել է դատարան՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու միջնորդությամբ:

**Առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելու (ՀՀ քր. օր 214-րդ հոդված)** վերաբերյալ նախապատրաստվել է 17 նյութ, որոնցով հարուցվել է 17 քրեական գործ: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 99 քրեական գործ, որից ընդամենը ավարտվել է 39 քրեական գործի վարույթ, այդ թվում 19 գործի վարույթ կարճվել է արդարացման, 9-ինը՝ ոչ արդարացման հիմքերով, իսկ 11 գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 14 գործի վարույթ կասեցվել է, որից 5-ինը՝ անձը հայտնի չլինելու, 8-ինը՝ անձի հետախուզման մեջ գտնվելու, իսկ 1-ինը՝ այլ հիմքով: 8 գործ ուղարկվել է ըստ ենթակայության, 13 գործ միացվել է, իսկ 25 գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված 99 (որից քննչական կոմիտե-88, հատուկ քննչական ծառայություն-3, ԱԱԾ քննչական վարչություն-6, ՊԵԿ քննչական վարչություն-2) քրեական գործով քրեական հետապնդման է

ենթարկվել ընդհանուրը 30 (որից քննչական կոմիտե-23, հատուկ քննչական ծառայություն-3, ԱԱԾ քննչական վարչություն-4) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 30 անձանցից 3-ը ձերբակալվել է, նրանցից 2-ը ազատվել ձերբակալումից: 26-ի վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 25 անձի մեղադրանք է առաջադրվել: 2 անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որոնք բավարարվել են, 1 անձի նկատմամբ որպես այլընտրանքային խափանման միջոց կիրառվել է գրավ: 6 անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է, որից 3-ինը՝ արդարացման, 3-ինը՝ ոչ արդարացման հիմքով: Դատախազի կողմից վերացվել է քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 1 որոշում: Դատի է տրվել 13 անձ, որից 2-ը գտնվել է կալանքի տակ: Քրեական հետապնդման ենթարկված 7 անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2018թ.:

**Պաշտոնեական դիրքն օգտագործելով ծառերի, թփերի և բուսածածկի ապօրինի հատման (ՀՀ քր. օր 296-րդ հոդված)** վերաբերյալ նախապատրաստվել է 4 նյութ, որոնցով հարուցվել են քրեական գործեր: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է ընդամենը 6 (որից հատուկ քննչական ծառայություն-2, ԱԱԾ քննչական վարչություն-4) քրեական գործ, որից 2-ը ուղարկվել է ըստ ենթակայության, իսկ 4-ը՝ միացվել է:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հոդվածով քրեական հետապնդման ենթարկված անձինք չեն եղել:

**Պաշտոնեական լիազորությունները չարաշահելու (ՀՀ քր. օր 308-րդ հոդված)** վերաբերյալ նախապատրաստվել է 155 նյութ, որից 107-ով հարուցվել է քրեական գործ, 48-ով՝ քրեական գործի հարուցումը մերժվել է, որից 47-ով արդարացման, իսկ 1-ով՝ ոչ արդարացման հիմքով: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 236 քրեական գործ, որից ընդամենը ավարտվել է 117 քրեական գործի վարույթ, այդ թվում 83 գործի վարույթ կարճվել է արդարացման, 11-ինը՝ ոչ արդարացման հիմքերով, իսկ 23 գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 23 գործի վարույթ կասեցվել է, որից 20-ինը՝ անձը հայտնի չլինելու, իսկ 3-ինը՝ անձի հետախուզման մեջ գտնվելու հիմքով: 21 գործ ուղարկվել է ըստ ենթակայության, 19 գործ միացվել է, իսկ 56 գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված 236 (որից քննչական կոմիտե-95, հատուկ քննչական ծառայություն-125, ԱԱԾ քննչական վարչություն-15, ՊԵԿ քննչական վարչություն-1) քրեական գործով քրեական հետապնդման է ենթարկվել ընդհանուրը 92 (որից քննչական կոմիտե-37, հատուկ քննչական ծառայություն-50, ԱԱԾ քննչական վարչություն-5) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 92 անձանցից 19-ը ձերբակալվել է, նրանցից 4-ը ազատվել ձերբակալումից: Քրեական հետապնդման ենթարկված անձանցից 74-ի վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 71 անձի մեղադրանք

է առաջադրվել: 16 անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որից 1-ը մերժվել է, 15-ը՝ բավարարվել, 3 անձի նկատմամբ որպես այլընտրանքային խափանման միջոց կիրառվել է գրավ: 3 մեղադրյալի պաշտոնավարում դադարեցվել է: 2 մեղադրյալ ազատվել է կալանքից, որից դատախազի կողմից 1-ը, դատարանի կողմից՝ 1-ը: 24 անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է, որից 11-ինը՝ արդարացման, 13-ինը՝ ոչ արդարացման հիմքով: Դատի է տրվել 56 անձ, որից 13-ը գտնվել է կալանքի տակ: Քրեական հետապնդման ենթարկված 10 անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2018թ., նշված անձանցից 2-ը գտնվել են կալանքի տակ:

**Պաշտոնական լիազորություններն անցնելու (ՀՀ քր. օր 309-րդ հոդված)** վերաբերյալ նախապատրաստվել է 67 նյութ, որից 54-ով հարուցվել է քրեական գործ, 12-ով քրեական գործի հարուցումը մերժվել է արդարացման հիմքով: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 96 քրեական գործ, որից 58 քրեական գործի վարույթ կարճվել է արդարացման հիմքով: 6 գործի վարույթ կասեցվել է անձը հայտնի չլինելու հիմքով: 6 գործ ուղարկվել է ըստ ենթակայության, 13 գործ միացվել է, իսկ 13 գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված 96 (որից քննչական կոմիտե-12, հատուկ քննչական ծառայություն-84) քրեական գործով քրեական հետապնդման է ենթարկվել ընդհանուրը 4 (որից քննչական կոմիտե-1, հատուկ քննչական ծառայություն-3) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 4 անձանց վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 4 անձի մեղադրանք է առաջադրվել: 2 անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է արդարացման հիմքով: 1 անձի վերաբերյալ քրեական գործի նախաքննությունը փոխանցվել է 2018թ.:

**Ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելու (ՀՀ քր. օր 310-րդ հոդված)** վերաբերյալ նախապատրաստվել է 1 նյութ, որով հարուցվել է քրեական գործ: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 2 քրեական գործ: 1 գործի վարույթ կարճվել է արդարացման հիմքով: 1 գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

Նշված հոդվածով քրեական հետապնդման ենթարկված անձ չի եղել:

**Կաշառք ստանալու (ՀՀ քր. օր 311-րդ հոդված)** վերաբերյալ նախապատրաստվել է 53 նյութ, որից 47-ով հարուցվել է քրեական գործ, 6-ով՝ քրեական գործի հարուցումը մերժվել է արդարացման հիմքերով: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 104 քրեական գործ, որից ընդամենը ավարտվել է 48 քրեական գործի վարույթ, այդ թվում 23 գործի վարույթ կարճվել է արդարացման հիմքով, իսկ 25 գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 9 գործի վարույթ կասեցվել է, որից 4-ինը՝ անձը հայտնի չլինելու, իսկ 5-ինը՝ անձի հետախուզման մեջ գտնվելու հիմքով:

6 գործ ուղարկվել է ըստ ենթակայության, 13 գործ միացվել է, իսկ 28 գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված 104 (որից քննչական կոմիտե-22, հատուկ քննչական ծառայություն-70, ԱԱԾ քննչական վարչություն-11, ՊԵԿ քննչական վարչություն-1) քրեական գործով քրեական հետապնդման է ենթարկվել ընդհանուրը 73 (որից քննչական կոմիտե-21, հատուկ քննչական ծառայություն-42, ԱԱԾ քննչական վարչություն-9, ՊԵԿ քննչական վարչություն-1) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 73 անձանցից 36-ը ձերբակալվել է, նրանցից 6-ը ազատվել ձերբակալումից: 64-ի վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 63 անձի մեղադրանք է առաջադրվել: 35 անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որոնք բավարարվել են, 1 անձի նկատմամբ որպես այլընտրանքային խափանման միջոց կիրառվել է գրավ: 2 մեղադրյալի պաշտոնավարում դադարեցվել է: 3 անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է արդարացման հիմքով: Դատի է տրվել 43 անձ, որից 25-ը գտնվել է կալանքի տակ: Քրեական հետապնդման ենթարկված 31 անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2018թ., նշված անձանցից 11-ը գտնվել են կալանքի տակ:

**Պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալու (ՀՀ քր. օր 311[1]-րդ հոդված)** վերաբերյալ նախապատրաստվել է 3 նյութ, որոնցով հարուցվել է 3 քրեական գործ: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 10 քրեական գործ, որից ընդամենը ավարտվել է 7 քրեական գործի վարույթ, այդ թվում 6 գործի վարույթ կարճվել է արդարացման հիմքերով, իսկ 1 գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 2 գործ ուղարկվել է ըստ ենթակայության, 1 գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված 10 (որից քննչական կոմիտե-8, հատուկ քննչական ծառայություն-2) քրեական գործով քրեական հետապնդման է ենթարկվել ընդհանուրը 13 (որից քննչական կոմիտե-12, հատուկ քննչական ծառայություն-1) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 13 անձանցից 1-ը ձերբակալվել է: 12-ի վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 12 անձի մեղադրանք է առաջադրվել: 2 անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան որոնք բավարարվել են: 1 մեղադրյալի պաշտոնավարում դադարեցվել է: 1 մեղադրյալ ազատվել է կալանքից՝ դատախազի կողմից: 10 անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է արդարացման հիմքով: Դատի է տրվել 2 անձ, որից 1-ը գտնվել է կալանքի տակ: Քրեական հետապնդման ենթարկված 1 անձի վերաբերյալ քրեական գործի նախաքննությունը փոխանցվել է 2018թ.:

**Կաշառք տալու (ՀՀ քր. օր 312-րդ հոդված)** վերաբերյալ նախապատրաստվել է 10 նյութ, որոնցով հարուցվել է 10 քրեական գործ: Հաշվետու ժամանակահատվածում նշված

հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 41 քրեական գործ, որից ընդամենը ավարտվել է 20 քրեական գործի վարույթ, այդ թվում 3 գործի վարույթ կարճվել է արդարացման, 3-ինը՝ ոչ արդարացման հիմքերով, իսկ 14 գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 4 գործի վարույթ կասեցվել է, որից 1-ինը՝ անձը հայտնի չլինելու, իսկ 3-ինը՝ անձի հետախուզման մեջ գտնվելու հիմքով: 3 գործ ուղարկվել է ըստ ենթակայության, 4 գործ միացվել է, իսկ 10 գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված 41 (որից քննչական կոմիտե-27, հատուկ քննչական ծառայություն-11, ԱԱԾ քննչական վարչություն-3) քրեական գործով քրեական հետապնդման է ենթարկվել ընդհանուրը 103 (որից քննչական կոմիտե-54, հատուկ քննչական ծառայություն-30, ԱԱԾ քննչական վարչություն-19) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 103 անձանցից 25-ը ձերբակալվել է, նրանցից 10-ը ազատվել ձերբակալումից: 95-ի վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 95 անձի մեղադրանք է առաջադրվել: 19 անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որից 1-ը մերժվել է, 18-ը՝ բավարարվել, 9 անձի նկատմամբ որպես այլընտրանքային խափանման միջոց կիրառվել է գրավ: 14 մեղադրյալի պաշտոնավարում դադարեցվել է: 7 անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է, որից 1-ինը՝ արդարացման, 6-ինը՝ ոչ արդարացման հիմքով: Դատի է տրվել 59 անձ, որից 5-ը գտնվել է կալանքի տակ: Քրեական հետապնդման ենթարկված 36 անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2018թ., նշված անձանցից 6-ը գտնվել են կալանքի տակ:

**Պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողին ապօրինի վարձատրություն տալը (ՀՀ քր. օր 312[1]-րդ հոդված)** վերաբերյալ հաշվետու ժամանակաշրջանում նյութեր չեն նախապատրաստվել: 2017թ.-ի ընթացքում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 1 քրեական գործ, որը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված 1 քրեական գործով քրեական հետապնդման է ենթարկվել ընդհանուրը 1 անձ, որի վերաբերյալ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

**Իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու համար ապօրինի վարձատրություն տալը (ՀՀ քր. օր 312.2-րդ հոդված)** վերաբերյալ հաշվետու ժամանակաշրջանում նյութեր չեն նախապատրաստվել, քրեական գործեր չեն քննվել:

Սակայն հաշվետու ժամանակաշրջանում կոռուպցիոն բնույթի այլ հոդվածներով քննված քրեական գործերով նշված հոդվածով քրեական հետապնդման է ենթարկվել ընդհանուրը 4 անձ, որից 3-ը դատի են տրվել:

**Կաշառքի միջնորդության (ՀՀ քր. օր 313-րդ հոդված)** վերաբերյալ նյութեր չեն նախապատրաստվել: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության

վերաբերյալ վարույթում քննվել է 3 քրեական գործ, որից 2 քրեական գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 1 գործ կասեցվել է՝ անձի հետախուզման մեջ գտնվելու հիմքով:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված 3 (որից քննչական կոմիտե-1, հատուկ քննչական ծառայություն-1, ԱԱԾ քննչական վարչություն-1) քրեական գործով քրեական հետապնդման է ենթարկվել ընդհանուրը 25 (որից քննչական կոմիտե-7, հատուկ քննչական ծառայություն-13, ԱԱԾ քննչական վարչություն-5) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 25 անձանցից 8-ը ձերբակալվել է, նրանցից 1-ը ազատվել ձերբակալումից: 24-ի վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 24 անձի մեղադրանք է առաջադրվել: 8 անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որոնք բավարարվել են, 3 անձի նկատմամբ որպես այլընտրանքային խափանման միջոց կիրառվել է գրավ: 2 մեղադրյալի պաշտոնավարում դադարեցվել է: 3 անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է, որից 1-ինը՝ արդարացման, 2-ինը՝ ոչ արդարացման հիմքով: Դատի է տրվել 16 անձ, որից 5-ը գտնվել է կալանքի տակ: Քրեական հետապնդման ենթարկված 5 անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2018թ., նշված անձանցից 1-ը գտնվել է կալանքի տակ:

**Պաշտոնեական կեղծիքի (ՀՀ քր. օր 314-րդ հոդված)** վերաբերյալ նախապատրաստվել է 44 նյութ, որից 34-ով հարուցվել է քրեական գործ, 10-ով՝ քրեական գործի հարուցումը մերժվել է, որից 8-ով արդարացման, իսկ 2-ով՝ ոչ արդարացման հիմքով: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 103 (որից քննչական կոմիտե-67, հատուկ քննչական ծառայություն-35, ՊԵԿ քննչական վարչություն-1) քրեական գործ, որից ընդամենը ավարտվել է 64 քրեական գործի վարույթ, այդ թվում 36 գործի վարույթ կարճվել է արդարացման, 15-ինը՝ ոչ արդարացման հիմքերով, իսկ 13 գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 6 գործի վարույթ կասեցվել է, որից 5-ինը՝ անձը հայտնի չլինելու, իսկ 1-ինը՝ անձի հետախուզման մեջ գտնվելու հիմքով: 6 գործ ուղարկվել է ըստ ենթակայության, 10 գործ միացվել է, իսկ 17 գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված քրեական գործերով քրեական հետապնդման են ենթարկվել ընդհանուրը 61 (որից քննչական կոմիտե-49, հատուկ քննչական ծառայություն-12) անձինք:

Քրեական հետապնդման ենթարկված 61 անձանցից 1-ը ձերբակալվել է, 51-ի վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 49 անձի մեղադրանք է առաջադրվել: 1 անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որը բավարարվել է: 27 անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է, որից 10-ինը՝ արդարացման, 17-ինը՝ ոչ արդարացման հիմքով: Դատի է տրվել 16 անձ, որից 2-ը գտնվել է կալանքի տակ: Քրեական հետապնդման ենթարկված 19 անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2018թ., նշված անձանցից 1-ը գտնվել է կալանքի տակ:

**Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ինքնակամ զավթումը, ինչպես նաև շենքերի և շինությունների ինքնակամ կառուցումը կասեցնելու, կանխարգելելու ուղղությամբ օրենքով սահմանված կարգով միջոցներ չձեռնարկելու (ՀՀ քր. օր 315[2]-րդ հոդված)** վերաբերյալ նախապատրաստվել է 11 նյութ, որից 4-ով հարուցվել է քրեական գործ, 7-ով՝ քրեական գործի հարուցումը մերժվել է, որից 5-ով արդարացման, 2-ով՝ ոչ արդարացման հիմքով: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ քննչական կոմիտեի վարույթում քննվել է 14 քրեական գործ, որից ընդամենը ավարտվել է 10 քրեական գործի վարույթ, այդ թվում 6 գործի վարույթ կարճվել է արդարացման, 3-ինը՝ ոչ արդարացման հիմքերով, իսկ 1 գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 1 գործ ուղարկվել է ըստ ենթակայության, 1 գործ միացվել է, իսկ 2 գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված քրեական գործերով քրեական հետապնդման են ենթարկվել ընդհանուրը 5 (բոլորն էլ քննչական կոմիտեի վարույթում) անձինք:

Քրեական հետապնդման ենթարկված անձանցից 2-ի վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 2 անձի մեղադրանք է առաջադրվել: 4 անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է, որից 2-ինը՝ արդարացման, 2-ինը՝ ոչ արդարացման հիմքով: Դատի է տրվել 1 անձ:

**Դատավորի, դատախազի, քննիչի կամ հետաքննության մարմնի կողմից ցուցմունք կամ բացատրություն կամ կամ կեղծ եզրակացություն տալուն կամ սխալ թարգմանություն կատարելուն հարկադրելը (ՀՀ քր. օր 341-րդ հոդված)** վերաբերյալ նախապատրաստվել է 11 նյութ, որից 10-ով հարուցվել է քրեական գործ, 1-ով քրեական գործ հարուցելը մերժվել է արդարացման հիմքով: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 13 (որից հատուկ քննչական ծառայություն-12, ԱԱԾ քննչական վարչություն-1) քրեական գործ, որից ընդամենը ավարտվել է 9 քրեական գործի վարույթ՝ կարճվել են արդարացման հիմքով: 1 գործ ուղարկվել է ըստ ենթակայության, 1 գործ միացվել է, իսկ 2 գործի նախաքննություն մնացել է անավարտ:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված քրեական գործերով քրեական հետապնդման ենթարկված անձինք չեն եղել:

**Ապացույցները կեղծելու (ՀՀ քր. օր 349-րդ հոդված)** վերաբերյալ նախապատրաստվել է 14 նյութ, որից 12-ով հարուցվել է քրեական գործ, 2-ով՝ քրեական գործ հարուցելը մերժվել է արդարացման հիմքով: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ հատուկ քննչական ծառայության վարույթում քննվել է 15 քրեական գործ, որից ընդամենը ավարտվել է 11 քրեական գործի վարույթ՝ կարճվել է արդարացման հիմքով: 1 գործ միացվել է, իսկ 3 գործի նախաքննություն մնացել է անավարտ:

Նշված հոդվածով քննված քրեական գործերով քրեական հետապնդում է իրականացվել 1 անձի նկատմամբ, որը դադարեցվել է արդարացման հիմքով:

**Ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելը (ՀՀ քր. օր 352-րդ հոդված)** վերաբերյալ նախապատրաստվել է 1 նյութ, որով քրեական գործի հարուցումը մերժվել է արդարացման հիմքով:

Հաշվետու ժամանակահատվածում նշված հոդվածով քրեական հետապնդման ենթարկված անձինք չեն եղել:

**Դատական ակտը դիտավորությամբ չկատարելը (ՀՀ քր. օր 353-րդ հոդված)** վերաբերյալ նախապատրաստվել է 5 նյութ, որից 3-ով հարուցվել է քրեական գործ, 2-ով՝ քրեական գործի հարուցումը մերժվել է արդարացման հիմքով: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 11 (որից քննչական կոմիտե-9, հատուկ քննչական ծառայություն-2) քրեական գործ, որից ընդամենը ավարտվել է 9 քրեական գործի վարույթ, այդ թվում 8 գործի վարույթ կարճվել է արդարացման հիմքով, 1 գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 2 գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված քրեական գործերով քրեական հետապնդման են ենթարկվել ընդհանուրը 3 (բոլորն էլ քննչական կոմիտեի վարույթում) անձինք, որից 2 անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է արդարացման հիմքով, դատի է տրվել 1 անձ:

**Իշխանությունը չարաշահելու, իշխանազանցության կամ իշխանության անգործության (ՀՀ քր. օր 375-րդ հոդված)** վերաբերյալ նախապատրաստվել է 51 նյութ, որոնցով հարուցվել է 51 քրեական գործ: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 96 (որից քննչական կոմիտե-95, հատուկ քննչական ծառայություն-1) քրեական գործ, որից ընդամենը ավարտվել է 48 քրեական գործի վարույթ, այդ թվում 25 գործի վարույթ կարճվել է արդարացման, 8-ինը՝ ոչ արդարացման հիմքերով, իսկ 15 գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 1 գործի վարույթ կասեցվել է անձը հայտնի չլինելու հիմքով: 2 գործ ուղարկվել է ըստ ենթակայության, 10 գործ միացվել է, իսկ 35 գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննչական կոմիտեի վարույթում քննված քրեական գործերով քրեական հետապնդման են ենթարկվել ընդհանուրը 61 անձինք:

Քրեական հետապնդման ենթարկված 61 անձանցից 5-ը ձերբակալվել է, նրանցից 1-ը ազատվել ձերբակալումից: 42-ի վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 42 անձի մեղադրանք է առաջադրվել: 8 անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որից 1-ը մերժվել է, 7-ը՝ բավարարվել, 3 անձի նկատմամբ որպես այլընտրանքային խափանման միջոց կիրառվել է գրավ: 3 մեղադրյալի պաշտոնավարում դադարեցվել է: 5 մեղադրյալ ազատվել է կալանքից, որից դատախազի կողմից 1-ը, դատարանի կողմից՝ 4-ը: 32 անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է, որից 20-ինը՝ արդարացման, 12-ինը՝ ոչ արդարացման հիմքով: Դատի է տրվել 30 անձ, որից 2-ը գտնվել է կալանքի տակ: Քրեական

հետապնդման ենթարկված 16 անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2018թ.:

Համեմատելով և վերլուծելով կոռուպցիոն բնույթի առավել տարածված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածով, 200-րդ, 214-րդ, 308-րդ, 311-րդ, 312-րդ և 313-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ վարույթում քննված և դատարան ուղարկված գործերի և դրանցով դատի տրված անձանց ցուցանիշները, պարզ է դառնում, որ.

Ի համեմատ 2016թ.-ի 2017թ. ընթացքում **Պաշտոնեական դիրքի օգտագործմամբ կատարված յուրացման կամ վատնման՝ ՀՀ քր. օր 179-րդ հոդվածով** նախատեսված հանցագործությունների վերաբերյալ վարույթում քննվել է **20-ով պակաս քրեական** գործ (2016թ. - 121 գործ, 2017թ. – 101 գործ), սակայն 9-**ով ավել քրեական գործ է ուղարկվել դատարան քան 2016թ.-ին** (2016թ. - 19 գործ, 2017թ. – 28 գործ) և **դատի է տրվել 23-ով ավել անձ** (2016թ. - 28 անձ, 2017թ. – 51 անձի):

Նույն ժամանակահատվածում **առևտրային կաշառքի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածով** նախատեսված հանցագործությունների վերաբերյալ վարույթում քննվել է **10-ով ավել քրեական** գործ (2016թ. - 7 գործ, 2017թ. – 17 գործ), 5-**ով ավել քրեական գործ է ուղարկվել դատարան քան 2016թ.-ին** (2016թ. - 1 գործ, 2017թ. – 6 գործ) և **դատի է տրվել 18-ով պակաս անձ** (2016թ. - 21 անձ, 2017թ. – 3 անձի):

**Առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելու՝ ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածով** նախատեսված հանցագործությունների վերաբերյալ վարույթում քննվել է **23-ով պակաս քրեական** գործ (2016թ. - 122 գործ, 2017թ. – 99 գործ), սակայն 8-**ով ավել քրեական գործ է ուղարկվել դատարան քան 2016թ.-ին** (2016թ. - 3 գործ, 2017թ. – 11 գործ) և **դատի է տրվել 9-ով ավել անձ** (2016թ. - 4 անձ, 2017թ. – 13 անձի):

**Պաշտոնեական լիազորությունները չարաշահելու՝ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածով** նախատեսված հանցագործությունների վերաբերյալ վարույթում քննվել է **53-ով ավել քրեական** գործ (2016թ. - 183 գործ, 2017թ. – 236 գործ), 5-**ով ավել քրեական գործ է ուղարկվել դատարան քան 2016թ.-ին** (2016թ. - 18 գործ, 2017թ. – 23 գործ) և **դատի է տրվել 22-ով ավել անձ** (2016թ. - 28 անձ, 2017թ. – 50 անձի):

ՈՒսումնասիրվող ժամանակահատվածում **կաշառք ստանալու՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածով** նախատեսված հանցագործությունների վերաբերյալ վարույթում քննվել է **41-ով ավել քրեական** գործ (2016թ. - 63 գործ, 2017թ. – 104 գործ), **15-ով ավել քրեական գործ է ուղարկվել դատարան քան 2016թ.-ին** (2016թ. - 10 գործ, 2017թ. – 25 գործ) և **դատի է տրվել 12-ով ավել անձ** (2016թ. - 26 անձ, 2017թ. – 38 անձի):

Նույն ժամանակահատվածում **կաշառք տալու՝ ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածով** նախատեսված հանցագործությունների վերաբերյալ վարույթում քննվել է **2-ով ավել քրեական** գործ (2016թ. - 8 գործ, 2017թ. – 10 գործ), **3-ով ավել քրեական գործ է ուղարկվել դատարան քան 2016թ.-ին** (2016թ. - 11 գործ, 2017թ. – 14 գործ) և **դատի է տրվել 33-ով ավել անձ** (2016թ. - 26 անձ, 2017թ. – 59 անձի):

**Կաշառքի միջնորդության՝ ՀՀ քրեական օրենսգրքի 313-րդ հոդվածով** նախատեսված հանցագործությունների վերաբերյալ վարույթում քննվել է **3-ով ավել քրեական** գործ (2016թ. - 0 գործ, 2017թ. – 3 գործ), **2-ով ավել քրեական գործ է ուղարկվել դատարան քան 2016թ.-ին** (2016թ. - 0 գործ, 2017թ. – 2 գործ) և **դատի է տրվել 12-ով ավել անձ** (2016թ. - 4 անձ, 2017թ. – 16 անձի):

**2017թ. ընթացքում կոռուպցիոն բնույթի թվով 100 նախապատրաստված և ավարտված նյութերով ու քննված և ավարտված քրեական գործերով պատճառված գույքային վնասը** կազմել է 569.410.497 ՀՀ դրամ (որից քննչական կոմիտե-560.029.581 ՀՀ դրամ, հատուկ քննչական ծառայություն-8.090.000 ՀՀ դրամ, ԱԱԾ քննչական վարչություն-1.290.916 ՀՀ դրամ), որից պետական գույքին պատճառված վնասը՝ 361.445.834 ՀՀ դրամ (որից քննչական կոմիտե-352.064.918 ՀՀ դրամ, հատուկ քննչական ծառայություն-8.090.000 ՀՀ դրամ, ԱԱԾ քննչական վարչություն-1.290.916 ՀՀ դրամ), իսկ 207.964.663 ՀՀ դրամը՝ իրավաբանական և ֆիզիկական անձանց գույքին պատճառված վնաս: Պատճառված ընդհանուր վնասից վերականգնվել է 269.615.270 ՀՀ դրամը, որից 252.070.385 ՀՀ դրամը (որից քննչական կոմիտե-242.689.469 ՀՀ դրամ, հատուկ քննչական ծառայություն-8.090.000 ՀՀ դրամ, ԱԱԾ քննչական վարչություն-1.290.916 ՀՀ դրամ)՝ պետական, իսկ 17.544.885 ՀՀ դրամը՝ իրավաբանակ և ֆիզիկական անձանց գույքին պատճառված վնասից:

**2017թ. ընթացքում այլ պետության իրավասու մարմիններին ուղարկվել է իրավական օգնություն ցույց տալու մասին** 9 միջնորդություն, որից հաշվետու տարվա ավարտին լրիվ կատարվել է 3-ը: Իսկ այլ պետության իրավասու մարմիններից ստացվել են նման 3 միջնորդություն, որից 2-ը կատարվել է լրիվ, իսկ 1-ը՝ մասնակի:

**2017թ. ընթացքում ՀՀ նախաքննական մարմինների կողմից հարուցված 403 քրեական գործերից 272-ը հարուցվել է ֆիզիկական և իրավաբանական անձանց** հաղորդումների հիման վրա, 8-ը՝ ՁԼՄ-ների հաղորդումների հիման վրա, 123-ը՝ հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատավորի կողմից իրենց լիազորությունները իրականացնելիս հանցագործությունների մասին տվյալների, հանցագործության նյութական հետքերի և հետևանքների հայտնաբերման հիմքով:

**Համաձայն ՀՀ հատուկ քննչական ծառայությունից և ԱԱԾ քննչական վարչությունից ստացված տվյալների՝ 2017թ. ընթացքում քննված կոռուպցիոն բնույթի քրեական գործերով քրեական հետապնդման ենթարկված անձանցից 101-ը հանդիսացել են պաշտոնատար անձինք**

Նշված պաշտոնատար անձինք ըստ գործունեության ոլորտների և պաշտոնների դասակարգվում են.

1. Ոստիկանության աշխատակիցներ՝ 45 անձ,
   այդ թվում՝

   ա) բաժնի պետի տեղակալ – 4 անձ,

   բ) անձնագրային բաժանմունքի պետ – 1 անձ,

   գ) ՔՀ բաժանմունքի պետ – 1 անձ,

   դ) ՔՀԲ օպերլիազոր – 2 անձ,

   ե) ՀՈԲ պետ – 2 անձ,

   զ) ՀՈԲ տեսուչ (ավագ տեսուչ) – 2 անձ,

   է) ՃՈ տեսուչ (ավագ տեսուչ) – 13 անձ,

   ը) ՊՊԾ տարածքային բաժանմունքի պետ – 1 անձ,

   ը) ոստիկան – 19 անձ,

2. ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության պաշտոնատար անձինք՝ 4 անձ,
   այդ թվում՝

   ա) բաժանմունքի պետ – 1 անձ,

   բ) ԴԱՀԿ հաշվապահ – 1 անձ,

   գ) հարկադիր կատարող – 2 անձ,

3. ՀՀ ՊԵԿ Պաշտոնատար անձինք՝ 10 անձ,
   այդ թվում՝

   ա) մաքսակետի պետ – 1 անձ,

   բ) մաքսային տեսուչ – 5 անձ,

   գ) հարկային տեսուչ – 4 անձ,

4. Ընդհանուր իրավասության դատարանի նախագահ՝ 1,
5. Ընդհանուր իրավասության դատարանի դատավոր՝ 2,
6. Դատախազության դատախազ՝ 2,

7. ՀՀ ՔԿ քննիչներ (ավագ քննիչ)՝ 3,
8. ԱԱԾ և Զինված ուժեր՝ 5 անձ,
այդ թվում՝

ա) ԱԱԾ սահմանապահ զորքերի սահմանային վերահսկողության բաժնի պետ, հերթափոխի պետ, հսկիչ և ավագ հսկիչ – 4 անձ,

բ) Տարածքային զինկոմիսարիատի բաժնի պետ – 1 անձ,

9. ՀՀ ԱՆ ՔԿՎ աշխատակիցներ՝ 8 անձ,
այդ թվում՝

ա) ՔԿՀ պետ, պետի տեղակալ – 2 անձ,

բ) ՔԿՀ օպերատիվ խմբի պետ – 1 անձ,

գ) ՔԿՀ անվտանգության ապահովման բաժնի պետ – 1 անձ,

դ) հերթապահ – 1 անձ,

ե) մասնագետ – 3 անձ,

10. Տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակազմի աշխատակիցներ՝ 2 անձ,
այդ թվում՝

ա) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բաժնի պետ – 1 անձ,

բ) Աբովյանի քաղաքապետարանի աշխատակազմի բաժնի պետ – 1 անձ,

11. Կրթության ոլորտի աշխատակիցներ՝ 5 անձ,
այդ թվում՝

ա) Դպրոցի տնօրեն – 1 անձ,

բ) ԲՈՒՀԻ ռեկտոր – 4 անձ,

12. Սոցիալական ապահովության ոլորտի աշխատակիցներ՝ 10 անձ,
այդ թվում՝

ա) ՀՀ սոցապ և աշխատանքի նախարարության աշխատակազմի ԲՍՓ գործակալության պետ– 1 անձ,

բ) ԲՍՓ գործակալության բաժնի պետ– 1 անձ,

գ) ԲՍՓ գործակալության տարածքային հանձնաժողովի նախագահ– 7 անձ,

դ) ԲՍՓ գործակալության հանձնաժողովի անդամ– 1 անձ,

13. Առողջապահության ոլորտի աշխատակիցներ՝ 2 անձ,

այդ թվում՝

ա) ՀՀ ԱՆ <<Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային կենտրոն>> ՊՈԱԿ տնօրեն– 1 անձ,

բ) ՀՀ ԱՆ <<Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային կենտրոն>> ՊՈԱԿ գլխավոր հաշվապահ– 1 անձ,

**14.** Տրանսպորտի և կապի ոլորտի աշխատակիցներ՝ 2 անձ,
այդ թվում՝

ա) ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի տրանսպորտի տեսչության տարածքային բաժնի գլխավոր մասնագետ-տեսուչ – 2 անձ,

**ՀՀ քննչական կոմիտեից ստացված տվյալների հմաձայն՝ 2017թ. ընթացքում քննված կոռուպցիոն բնույթի քրեական գործերով քրեական հետապնդման ենթարկված անձանցից 191-ը հանդիսացել են պաշտոնատար անձինք** որից 1-ը՝ բարձրաստիճան պաշտոնատար անձ, 8-ը՝ զբաղեցրել է քաղաքական պաշտոններ:

Քրեական հետապնդման ենթարկված նշված պաշտոնատար անձինք ըստ գործունեության ոլորտների դասակարգվում են.

1. Առողջապահություն- 6 անձ
2. Կրթություն- 37 անձ
3. Իրավապահ- 2 անձ
4. Պետական գնումներ- 2 անձ
5. Սոցիալական ապահովություն- 5 անձ
6. էներգետիկայի և բնական պաշարների- 2 անձ
7. Տեղական ինքնակառավարման- 20 անձ
8. Այլ ոլորտներ- 117 անձ

Ստացված տեղեկատվության մեջ նշում չի եղել վերը նշված անձանց կոնկրետ զբաղեցրած պաշտոնների վերաբերյալ, ինչի հետ կապված լրացուցիչ հարցում է կատարվել քննչական կոմիտեից:

**2017թ. ընթացքում ՀՀ նախաքննական մարմինների կողմից հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքների վերացման ուղղությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 200-րդ հոդվածի կարգով իրավասու մարմիններին ուղարկվել է թվով 94** (որից քննչական կոմիտե-35, հատուկ քննչական ծառայություն-57, ԱԱԾ քննչական վարչություն-2) **միջնորդագիր:**

Ամփոփելով վերոգրյալը կարելի է փաստել, որ 2017թ. աճել է կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման ցուցանիշը: Վերջիններս ավանդաբար համարվում են լատենտայնության բարձր աստիճան ունեցող հանցագործություններ: Դրանց հայտնաբերումը, բացահայտումը, ինչպես նաև պաշտոնատար անձանց մեղավորության հիմնավորումը, հաճախ մեծ բարդություն է ներկայացնում և պահանջում է քրեական հետապնդման մարմինների կողմից հետևողական, գրագետ պլանավորված, արդյունավետ և համագործակցված գործողությունների իրականացում:

Նշվածով պայմանավորված՝ այս հանցատեսակների թվի աճը, ի տարբերություն այլ հանցանքների, դրական է գնահատվում. այդպիսի դինամիկան խոսում է ոչ թե իրականում այդ հանցանքների ծավալների ընդլայնման, այլ՝ դրանց դեմ տարվող հատկապես քրեաիրավական պայքարի արդյունավետության բարձրացման մասին:

2017թ. ընթացքում իրականացվել են ինչպես իրավական, այնպես էլ ինստիտուցիոնալ և կազմակերպական բնույթի լուրջ բարեփոխումներ, որոնք էապես ապահովել են կոռուպցիոն բնույթի հանցագործությունների կանխարգելման, դրանց հայտնաբերման, և քրեական հետապնդման աշխատանքների արդյունավետության բարձրացումը:

Մասնավորապես՝

Կոռուպցիոն հանցագործությունների շրջանակը Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով սահմանված չափանիշներին համապատասխանեցնելու, նշված հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով դատախազական հսկողության և դատարանում մեղադրանքի պաշտպանության որակը բարձրացնելու նպատակով, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2017թ. հունվարի 19-ի թիվ 3 հրամանով սահմանվել են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված արարքները կոռուպցիոն հանցագործություններ համարելու չափանիշները և հրամանի հավելվածով հաստատվել է կոռուպցիոն հանցագործությունների ցանկը, որում ներառվել են ՀՀ քրեական օրենսգրքի թվով 67 հոդվածով նախատեսված հանցագործություններ:

Ըստ այդմ՝ կոռուպցիոն հանցագործություն է համարվել այն հանցավոր արարքը, որը կատարվել է ոչ իրավաչափ առավելություն ստանալու նպատակով՝ շահադիտական կամ անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով, հատուկ սուբյեկտի՝ պաշտոնատար անձի կամ առևտրային կամ այլ կազմակերպություններում կարգադրիչ կամ այլ կառավարչական գործառույթներ իրականացնող կամ առևտրային կազմակերպություններում այլ պաշտոն զբաղեցնող անձի կողմից ծառայողական դիրքի ընձեռած հնարավորություններն օգտագործելով:

Բացի այդ, կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով դատախազական հսկողության և դատարանում մեղադրանքի պաշտպանության որակը բարձրացնելու նպատակով ՀՀ գլխավոր դատախազի 2017թ. մարտի 13-ի թիվ 26 հրամանով սահմանվել են ՀՀ դատախազության համակարգում դատախազների միջև աշխատանքային պարտականությունների բաշխում կատարելու վերաբերյալ

կարգադրության, ինչպես նաև դրա փոփոխման և /կամ/ լրացման վերաբերյալ կարգադրության օրինակելի ձևերը:

Նշված հրամանով Երևան քաղաքի և մարզերի դատախազներին հանձնարարվել է աշխատանքային պարտականությունների բաշխում կատարելու վերաբերյալ կարգադրություններով, որպես կանոն, ապահովել դատախազությունների դատախազների մասնագիտացում ըստ առանձին հանցատեսակների, այդ թվում՝ պետական իշխանության դեմ ուղղված և կոռուպցիոն հանցագործություններով:

2017թ. ընթացքում ՀՀ գլխավոր դատախազությունում պարբերաբար անցկացվել են քննարկումներ կոռուպցիոն բնույթի քրեական գործերով դատավարական ղեկավարում իրականացնող դատախազների և նախաքննություն իրականացնող քննիչների մասնակցությամբ: Իրենցից որոշակի բարդություն ներկայացնող կոռուպցիոն հանցագործություններ բացահայտած քննիչներն ու օպերատիվ հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների աշխատակիցները ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի միջնորդությամբ պարգևատրվել են, իսկ նրանց գործունեության ընթացքում հայտնաբերված թերացումների ու բացթողումների դեպքում՝ համապատասխան գրություններով ուշադրության են հրավիրվել հետաքննության և քննչական բաժինների ղեկավարությանը, որոնք էլ յուրաքանչյուր դեպք քննարկել են օպերատիվ խորհրդակցություններում:

ՀՀ գլխավոր դատախազի հանձնարարությամբ կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի կողմից ՀՀ դատախազության բոլոր ստորաբաժանումներից պահանջվել է <<Կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունքների մասին>> ներկայացնել ամսեկան հաշվետվություն, որն իր մեջ պարունակում է նշված բնույթի հանցագործությունների վերաբերյալ նախապատրաստված նյութերի, հարուցված քրեական գործերի, գործերով անցնող մեղադրյալների, ընտրված խափանման միջոցների, պատճառված նյութական վնասի և դրա վերականգնման, ինչպես նաև քննված քրեական գործերի ընթացքի վերաբերյալ վիճակագրական տվյալներ:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը ՀՀ դատախազության ստորաբաժանումներին հանձնարարել է կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ քննվող քրեական գործերով անցնող, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնող անձանց վերաբերյալ նախաքննության ընթացքում պարտադիր քննության առարկա դարձնել ապօրինի հարստացման մասով (ՀՀ քր. օր. 310.1-րդ հոդված): Դրա վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության կողմից մշակվում է մեթոդական ուղեցույց:

2017թ. դեկտեմբերի 9-ին ՀՀ գլխավոր դատախազության և Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի միջև ստորագրվել է համագործակցության հուշագիր, որով նախատեսվում են միջոցառումներ՝ ուղղված կոռուպցիայի դեմ պայքարի կանխարգելմանը և կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը, հակակոռուպցիոն ոլորտում իրավապահ մարմինների և

քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համագործակցության զարգացմանը, քաղաքացիների՝ կոռուպցիայի դեմ պայքարի անհրաժեշտության և այդ պայքարի միջոցների վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացմանը, կոռուպցիայի դեմ պայքարում ֆիզիկական և իրավաբանական անձանց շահերի և իրավունքների պաշտպանության ապահովմանը և այլն:

«Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքին համապատասխան անանուն հաղորդումների ներկայացման միասնական էլեկտրոնային հարթակ ստեղծվելու կապակցությամբ Վարչության կողմից մշակվել է ՀՀ գլխավոր դատախազության կողմից իրականացվելիք գործողությունների աշխատանքային ծրագիր-քարտեզ: